



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



ՏԵՂԵԿԱԳԻՐ

**2018-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

2018 – 2019 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ.....	4
2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ.....	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնարար՝ Սահմանադրության մակարդակում ամրագրված ուղղություններն են մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը, խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, ինչպես նաև իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելը: Այս գործառույթների համակցությունը թույլ է տալիս ինչպես անհատական մակարդակում խնդիրների քննարկման և մշտադիտարկման արդյունքներով վեր հանել համակարգային խնդիրները, այնպես էլ կանխորոշել դրանց լուծման ուղիները՝ ունենալով անհրաժեշտ իրավական գործիքակազմ:

Նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը բաղկացած է մի քանի հիմնական ուղղություններից: Մասնավորապես, Պաշտպանը մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնում է գրավոր կարծիք, ինչպես նաև նախաձեռնում է իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ:

Ավելին, Պաշտպանը նպաստում է նաև նորմատիվ իրավական ակտերի կարգավորումների համապատասխանության ապահովմանը ՀՀ Սահմանադրությանը: Այս համատեքստում Պաշտպանը իրավասու է դիմել Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

Ավելին, Սահմանադրական դատարանի հետ ձևավորված սերտ համագործակցության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարանում քննվող մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ գործերով հանդես է գալիս որպես դատարանի ընկեր (*amicus curiae*): Այս կարգավիճակում Պաշտպանը Սահմանադրության 2-

րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Դատարանում քննվող գործերի վերաբերյալ ներկայացնում է հատուկ դիրքորոշումներ (*amicus brief*): Դիրքորոշումների հիմքում դրվում են ինչպես Պաշտպանին հասցեագրված անհատական բողոքների, այնպես էլ ներպետական ու միջազգային կարգավորումների վերլուծությունը:

Վերը նշված գործառույթների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ սահմանադրական դատարանի միջև ինստիտուցիոնալ կապերը խթանելուն և զարգացնելուն է միտված Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարանում ներկայացուցչի ինստիտուտը:

Սույն տեղեկագրի նպատակն է հանրայնացնել Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացված հատուկ դիրքորոշումները:

Հարկ է նկատել, որ նախորդ տարի հրապարակվել է «2017 – 2018 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր» տեղեկագիրը¹: Այն ներառում է 2017 թվականին Սահմանադրական դատարան ներկայացված բոլոր, ինչպես նաև 2018 թվականի հատուկ դիրքորոշումների մի մասը:

Սույն տեղեկագրում ներկայացված են 2018 թվականին Դատարանին հասցեագրված այն հատուկ կարծիքները, որոնք ներառված չեն եղել նախորդում, ինչպես նաև 2019 թվականի նոյեմբերի 18-ի դրությամբ ընթացիկ տարում ներկայացվածները:

¹ Տե՛ս տեղեկագիրը հետևյալ հղումով <https://ombuds.am/am/site/ViewNews/674>:

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ» դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի և 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի դրույթներով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ» դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ պահանջով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Վերջնական դատական ակտի պատճենն ամբողջությամբ ստանալը և դրան ծանոթանալը կարևոր նշանակություն ունի անձի կողմից իր բողոքարկման իրավունքի իրականացման համար: Ուստի, ներկայացված հարցի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ քրեական դատավարության ընթացքում բողոքարկման ինստիտուտի, մասնավորապես՝ տուժողի կողմից բողոքարկման իրավունքի իրականացման առկա կարգավորումներին:

Այսպես, Դիմողը՝ որպես քրեական գործով տուժող ճանաչված անձ, մեղադրական դատավճռի կայացումից հետո ցանկացել է բողոքարկել դատարանի մեղադրական դատավճիռը: Այս նպատակով Դիմողը դատավճիռը չստանալու պայմաններում այն դատարանի կողմից ստանալու դիմում է ներկայացրել: Դատավճռի պատճենը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում

Դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել, սակայն ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ժամկետները բաց թողնելու պատճառաբանությամբ մերժել է այն: Արդյունքում, Դիմողը գրկվել է իր իրավունքներին վերաբերող դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի² 375-րդ հոդվածը նախատեսում է, որ «դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ»: Այսինքն՝ տարբերակված կարգավորում է նախատեսված մի կողմից դատապարտվածի, արդարացվածի, պաշտպանի և մեղադրողի, իսկ մյուս կողմից՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և նրանց ներկայացուցիչների կապակցությամբ: Սակայն նշյալ բոլոր անձինք, լինելով քրեական գործի քննության ելքով շահագրգռված անձինք, ունեն վերջնական դատավճռի դեմ բողոք բերելու հավասար իրավունք: Այսպիսով, Դիմողի կողմից բարձրացված՝ Օրենսգրքի 375-րդ հոդվածի սահմանադրականության հարցի լուծումը պայմանավորված է նրանով, թե արդյոք արդարացված է այդպիսի տարբերակված կարգավորումը, և արդյոք այդ պայմաններում ապահովվում է տուժողների կողմից քրեական դատավարության շրջանակներում իրենց բողոքարկման իրավունքի լիարժեք իրականացման հնարավորությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր ԵԿԴ/0077/11/12 որոշմամբ գտել է, որ «քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով» (կետ 25), և որ «քրեական դատավարության ընթացքին տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից, նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը» (կետ 26): Այսինքն՝ քրեական

² Այսուհետ՝ Օրենսգիրք

դատավարության կարևորագույն խնդիրների շարքում է տուժողի իրավունքների պաշտպանության ապահովումը, որն իրականացվում է նաև դատավարական ակտերի, ինչպես նաև դատավճռի բողոքարկման միջոցով այն դեպքերում, երբ տուժողը գտնում է, որ դրանցով խախտվում են իր իրավունքները: Հակառակ պարագայում չի ապահովվի տուժողի՝ արդարադատության մատչելիության իրավունքը:

Տուժողների համար արդարադատության մատչելիության պահանջն արտահայտված է մի շարք միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» ՄԱԿ-ի N 40/34 բանաձևի³ 4-րդ կետով սահմանվում է, որ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (85) 11 հանձնարարականի 7-րդ կետով սահմանվում է, որ տուժողը պետք է իրավունք ունենա պահանջելու քրեական հետապնդում չիրականացնելու մասին իրավասու մարմնի որոշման վերանայում⁴:

Արդարադատության մատչելիությունը ենթադրում է նաև վերադաս մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրությունը որոշակի խումբ անձանց իրավունք է վերապահում բողոքարկելու իրավասու մարմինների և դատարանների կողմից կայացված ակտերը: Ինչ վերաբերում է քրեական գործով տուժողներին, ապա Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը նախատեսում է, որ տուժողն իրավունք ունի «բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը»: Այսինքն՝ օրենսդիրը ևս ընդունել է տուժողի՝ բողոքարկման իրավունքը:

Այս առումով պետք է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը Պայմանադիր կողմերին չի պարտավորեցնում ունենալ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյաններ: Սակայն այն դեպքերում, երբ Պետությունը նախատեսում է այդպիսի ատյաններ, ապա այն

³ <http://www.un.org/documents/ga/res/40/a40r034.htm>

⁴ [https://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanteklifi/recR\(85\)11e.pdf](https://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanteklifi/recR(85)11e.pdf)

պարտավոր է ապահովել նաև այդ ատյաններում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների իրականացումը (*Delcourt v. Belgium* գործով 1970 թվականի հունվարի 17-ի թիվ [2689/65](#) գործով վճիռ, կետ 25): Ստացվում է, որ թեև վերաքննիչ ատյանների ստեղծումը գտնվում է պետության հայեցողության շրջանակում, սակայն այդպիսի ատյանների առկայության պարագայում դրանք պետք է լինեն մատչելի, իսկ որևէ խումբ անձանց համար դրանց դիմելու անհնարինությունը կամ այլ անձանց համեմատությամբ լրացուցիչ պայմանների կամ տարբերակված կանոնների նախատեսումը պետք է լինի արդարացված:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս գտել է, որ «օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար» (ՍԴՈ-1254, կետ 6), իսկ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը չպետք է թողնվի դատարանի հայեցողությանը, այլ պետք է իրավունքի ուժով (*ex jure*) ճանաչվի հարգելի (ՍԴՈ-1052, կետ 11), ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

Այսպիսով, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը տուժողին, ինչպես և դատապարտվածին, արդարացվածին, պաշտպանին և մեղադրողին վերապահում է դատավճիռը բողոքարկելու իրավունք՝ միևնույն ժամանակ տարբերակված կարգավորում նախատեսելով այդ իրավունքի իրականացման համար: Արդյունքում ստացվում է, որ Օրենսգրքի 375-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում դատավճիռը ստանալով՝ դատապարտյալը, արդարացվածը, պաշտպանը կամ մեղադրողը կարող են մեկ ամսվա ընթացքում վերաքննիչ բողոք ներկայացնել և բողոքը համարվի ընդունելի, իսկ տուժողի պարագայում, երբ օրենսդրորեն սահմանված չէ 5-օրյա ժամկետում դատավճիռը տուժողին նույնպես ուղարկելու պահանջ, դատավճիռը միայն լրացուցիչ դիմելուց հետո ստանալու և ստանալու պահից սկսած (որը կարող է լինել 375-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետի ավարտից հետո) մինչև մեկ ամսվա ընթացքում բողոք բերելու դեպքում վերաքննիչ բողոքը կարող է մերժվել՝ բողոքարկման համար սահմանված մեկամսյա ժամկետը լրացած լինելու

պատճառաբանությամբ: Այսպիսի կարգավորման պայմաններում տուժողի համար պարզ չէ, թե արդյոք ինքը պարտավոր է 5-օրյա ժամկետի ընթացքում դատավճիռը ստանալու դիմում ներկայացնել, և արդյոք դատարանն իր հերթին պարտավոր է տուժողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում մինչև նշված 5-օրյա ժամկետի ավարտը տուժողին նույնպես տրամադրել դատավճիռը:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ առկա կարգավորումները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված իրավական որոշակիության սկզբունքին, և այն, որ տուժող կողմը իրենից անկախ հանգամանքների պատճառով կարող է զրկվել իր իրավունքներին վերաբերող դատական ակտի բողոքարկման հնարավորությունից, հանգեցնում է արդարադատության մատչելիության և հետևաբար ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի սահմանափակման:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2018 թվականի ապրիլի 4-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի⁵ 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 97-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 23-րդ, 28-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների համապատասխանության հարցը որոշելու կապակցությամբ:

Դիմումում Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 97-րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննարկվել է անձի, ում նկատմամբ վարչական գործով վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել, արժանապատվության, պատվի ու բարի համբավի պաշտպանության տեսանկյունից:

Մասնավորապես, Դիմող կողմը նշել է, որ Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 97-րդ հոդվածի համապատասխան դրույթների

⁵ Այսուհետ՝ Օրենսգրք

համադրված վերլուծության արդյունքում ստացվում է, որ նշված հոդվածների կիրառությամբ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը բացասական իրավական հետևանքներ են առաջացնելով դիմող կողմի համար: Այսպես, հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի կարճման արդյունքում վերջինիս նկատմամբ վարչական վարույթը կարճվում է ոչ արդարացնող հիմքով, ինչի արդյունքում դադարեցվում է նաև անձի ապացուցման հետագա գործընթացն ու անձը զրկվում է այդ գործընթացում իր արդար դատաքննության իրավունքի իրականացումից:

Դիմող կողմի պնդմամբ՝ վերոնշյալ օրենսդրական կարգավորումը հակասում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 23-րդ, 28-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ , 80-րդ և 81-րդ հոդվածներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համադիր վերլուծությունից հետևում է, որ որևէ տարբերակում առկա չէ հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի վարույթը կարճելու դեպքերի համար: Նշված հիմքով վարույթը կարճելիս, միաժամանակ դադարեցվում է նաև նույն վարչական գործի շրջանակներում ապացուցման հետագա գործընթացը: Հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի վարույթի կարճման արդարացման վճռի կայացման անհնարինության հարցն անհրաժեշտ է դիտարկել անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի ապահովման տեսանկյունից:

Նշված գործերի շրջանակներում պատասխանողները կարող են ունենալ թե՛ օրինական նյութական շահագրգռվածություն և թե՛ իր և իր ընտանիքի անունից բարոյական շահագրգռվածություն, ինչը պայմանավորված է ինչպես նրա օրինական շահերի պաշտպանությամբ, այնպես էլ՝ անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Խնդիրն անհրաժեշտ է դիտարկել հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով սահմանված անձի արժանապատվության իրավունքը: Սահմանադրական կարգի և այլ հիմունքների սկզբունքների շարքում մարդու արժանապատվության՝ որպես նրա իրավունքների և ազատությունների

անքակելի հիմքի մասին դրույթներն օժտված են առաջնայնությամբ, գերակայությամբ: Մարդու իրավունքները բխեցվում են բացառապես մարդկային անհատի արժեքից: Մարդու արժեքի, նրա իրավունքների և ազատությունների առաջնայնության սկզբունքը ներառում է Սահմանադրության ողջ բովանդակությունը⁶: Վերջինս սահմանադրական իրողություն է, որ պետք է կանխորոշի իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկան: Մնացած բոլոր սահմանադրական սկզբունքները կարող են դիտարկվել որպես միադասական, բայց մարդու, նրա իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքին ստորադաս, որոնց անքակտելի հիմք է հանդիսանում մարդու արժանապատվությունը: Մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքից բխում են պետության մի շարք պարտականություններ՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, դրանց ապահովումը, երաշխավորումն ու պաշտպանությունները:⁷

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի արդար դատաքննությունը սահմանող 6-րդ հոդվածը, ի թիվս այլնի, ներառում է նաև բարի համբավի իրավունքը⁸:

Այսպիսով, խնդրո առարկա կարգավորումների վերաբերյալ կատարված վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ գործող դատավարական կարգավորումներն այնքանով, որքանով չեն ամրագրում վարչական գործով վարույթի շրջանակներում անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ ընթացակարգեր, որոնք կբովանդակեն և կերաշխավորեն անձի արժանապատվության իրավունքի պաշտպանությունը, խնդրահարույց են արդար դատաքննության սահմանադրական պահանջի տեսանկյունից: Ուստի՝ անհրաժեշտ է սահմանադրականության հարցն ուսումնասիրելիս խնդիրը դիտարկել նաև անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի պաշտպանության տեսանկյունից:

⁶ ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու, 2010թ.

⁷ Տե՛ս նույն տեղում

⁸ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթների վերաբերյալ ուղեցույց, 2017թ.

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ, 158-րդ հոդվածի 2-րդ մասի և 159-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով (2005 թվականի փոփոխություններ), «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ և 71-րդ հոդվածներով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁹ 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ, 158-րդ հոդվածի 2-րդ մասի և 159-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի լուծման խնդրանքով:

Դիմումում Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, 154-րդ, 158-րդ հոդվածի 2-րդ մասի և 159-րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցի հարուցման կարգով ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի չնախատեսման հետևանքով առաջանում է հարազատների կյանքի իրավունքի համար ոչ նյութական վնասի հարցի լիարժեք և ժամանակին քննության ու հատուցման իրավունքի իրացման խնդիր:

Դիմող կողմի պնդմամբ՝ վերոնշյալ օրենսդրական կարգավորումները հակասում են 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 24-րդ, 25-րդ, 61-րդ, 63-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ընդհանուր վերլուծության է ենթարկվել ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը: Այսպես, քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցով ոչ նյութական վնասի փոխհատուցման հնարավորությունը նախ անհրաժեշտ է դիտարկել արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից: Տվյալ պարագայում անհրաժեշտ է հասկանալ քրեական գործով վարույթի ընթացքում քաղաքացիական հայցի ինստիտուտի բնույթը և դրա անհրաժեշտությունը: Տրամաբանությունն այստեղ այն է, որ միմյանց հետ փոխկապակցված

⁹ Այսուհետ՝ Օրենսգիրք

հարաբերությունները քննվեն նույն դատական վարույթում՝ դրանով իսկ ապահովվելով իրավունքի դատական պաշտպանության արդյունավետությունը:

Այսպես, Սահմանադրական դատարանը նախկինում անդրադարձել է միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների՝ նույն դատական վարույթում քննելու անհրաժեշտության հարցին՝ նշելով, որ թե՛ Սահմանադրությամբ և թե՛ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները, որոնք իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը: Մասնավորապես, 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների առկայության հնարավորությունը հաշվի չառնելը և նշված իրավահարաբերություններից ծագող գործերը մեկ դատարանում քննելու հանգամանքի բացակայությունը գործնականում բացասաբար են անդրադառնում իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության վրա:

Հիշատակման է արժանի նաև նույն որոշմամբ Սահմանադրական դատարանի ներկայացրած այն դիրքորոշումը, որ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 19-րդ հոդվածում «իր խախտված իրավունքները վերականգնելու» և «իր գործի» ձևակերպումների համադրված վերլուծությունը վկայում է, որ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը (2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասում ևս պահպանվել է «իր գործի քննության» ձևակերպումը, այն է՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք):

Հարկ է նշել, որ տարաբնույթ փոխկապակցված հայցապահանջների համատեղ քննության վերջնական նպատակը խախտված իրավունքի ամբողջական վերականգնումն է: Մեկ վարույթում իրար փոխկապակցված գործերի քննությունը, ակնհայտորեն, օժանդակում է դատարան դիմած անձի մի

շարք հիմնարար իրավունքների՝ այդ թվում ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի իրացմանը: Հիշատակման է արժանի նաև այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում հայտնել է տեսակետ առ այն, որ քրեական դատավարության ընթացքում տարբեր երաշխիքներ են գործում մեղադրյալի օգտին, և հնարավոր է, որ նա անմեղ ճանաչվի ոչ բավարար ապացույցներ լինելու պատճառով, բայց չի կարող մյուս կողմին զրկել ապացուցման այլ բեռով հատուցում պահանջելու համար դատարանի մատչելիության հնարավորությունից: Եվրոպական դատարանը գտել է, որ նման լայն մեկնաբանությունը ոչ միայն չի բխում անմեղության կանխավարկածի վերաբերյալ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից, այլև ընդհանուր հիմք չունի Եվրախորհրդի անդամ երկրների իրավական համակարգերում, այլապես քրեական գործի կարճումը կամ ամբաստանյալի արդարացումը կարող է հանգեցնել տուժողի՝ քաղաքացիական գործով դատարան դիմելու իրավունքի կամայական կամ անհամաչափ սահմանափակման: Այսինքն, յուրաքանչյուր դեպքում անձը հնարավորություն է ունենալու քաղաքացիական վարույթի շրջանակներում հասնել իր հայցի բավարարմանը:¹⁰

Այնուամենայնիվ, սրա հետ մեկտեղ կարող ենք փաստել, որ գործերի համատեղ քննության դեպքում, այնուամենայնիվ, անձի վրա լրացուցիչ բեռ չի դրվի, վերջինս ստիպված չի լինի նախաձեռնել քաղաքացիադատավարական վարույթ հարուցելու գործողություններ:

Մյուս կողմից հարկ է նկատել, որ խոսքն անձի խախտված իրավունքների վերականգման համար կարևոր նշանակություն ունեցող ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջի մասին է: Մինչև 2014 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բացակայում էր ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը: 2013 թվականի նոյեմբերի 5-ին Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1121 որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով վերջինս բարոյական վնասը չէր դիտում որպես վնասի տարատեսակ և չէր ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության

¹⁰ Վեյլան ընդդեմ Մալթայի, 2014 թվականի փետրվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 69122/10, կետ 28

իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը: Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանցով պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում և կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ և արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը և չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Ավելին, ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ Եվրոպական դատարանը Հայաստանի նկատմամբ կայացրել է վճիռներ:¹¹

Արդյունքում Քաղաքացիական օրենսգրքում կատարվեցին լրացումներ, ամրագրելով ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը: Ավելին, ՀՀ Սահմանադրության 2015 թվականի բարեփոխումների արդյունքում ամրագրվեց, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Այսինքն՝ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը պարբերաբար ավելի է զարգանում, իսկ իրավական ակտերը պետք է նախատեսեն այդ իրավունքի իրականացման արդյունավետ մեխանիզմներ: Ըստ այդմ, անհրաժեշտ է նաև հիշատակել ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը, ըստ որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների *արդյունավետ իրականացման համար*

¹¹ Տե՛ս Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի (Khachatryan and Others v. Armenia) 2012թվականի նոյեմբերի 27-ի վճիռը գանգատ թիվ 23978/06, կետեր 155-159: Սահակյանն ընդդեմ Հայաստանի (Sahakyan v. Armenia) 2015 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը գանգատ թիվ 66256/11: Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի (Poghosyan and Baghdasaryan v. Armenia) 2012 թվականի հունիսի 12-ի վճիռը գանգատ թիվ 22999/06, կետ 46, 47, 48:

անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այսինքն՝ ոչ նյութական վնասի հատուցման իրավունքն ամրագրելիս անհրաժեշտ է նաև նախատեսել դրա իրականացման գործուն և արդյունավետ մեխանիզմներ: Ըստ այդմ, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է գույքային վնասի հատուցման հայցը քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցով ներկայացնելու հնարավորությունը՝ տրամաբանական է նաև ոչ նյութական վնասի հատուցման պարագայում նման կառուցակարգի և հնարավորության նախատեսումը:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ և 71-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 2018 թվականի հոկտեմբերի 25-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի¹² 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի լուծման խնդրանքով:

Դիմումում Օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխում ընդգրկված նորմերի սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով չեն նախատեսում դատապարտյալի կողմից քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների և գործողությունների դեմ բողոք ներկայացնելու ժամկետները, դատավարական կարգը, հիմքերը, պայմանները, այդ բողոքների քննության դատավարական կարգը, վարույթին մասնակցելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը, դատարանի լիազորությունների շրջանակը և դրա հետ կապված այլ հարցեր:

¹² Այսուհետ՝ Օրենսգիրք

Դիմող կողմի պնդմամբ՝ վերոնշյալ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 79-րդ, 75-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում նախատեսված են վարչական և ընդհանուր իրավասության դատարանների առջև գործերի ընդդատության և նրանց միջև գործերի բաշխման վերաբերյալ կարգավորումներ: Այսպես.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն պատժի կատարման հետ կապված գործերը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 49-րդ գլխում հստակ սահմանված են այն հարցերի շրջանակը, որոնք պատժի կատարման փուլում ենթակա են քննության ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների և գործողությունների դեմ բողոքները ներառված չեն նշված հարցերի շրջանակում: Ավելին՝ Օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված են ընդհանուր իրավասության դատարանների լիազորությունները: Նշված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարող է որոշումներ կայացնել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազդրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները:

Վերը նշված նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենսգրքով քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների և գործողությունների

բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, ինչպես նաև սահմանված չեն բողոք ներկայացնելու ժամկետները, դատավարական կարգը, հիմքերը, պայմանները, այդ բողոքների քննության դատավարական կարգը, վարույթին մասնակցելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը, դատարանի լիազորությունների շրջանակը և դրա հետ կապված այլ հարցեր:

Այս կապակցությամբ պետք է փաստել, որ քրեակատարողական հիմնարկի պետի որոշումները և գործողությունները բողոքարկելը վերաբերում է հանրային իրավահարաբերություններից ծագող վեճին, սակայն, միևնույն ժամանակ, այն վերաբերում է պատժի կատարմանը, հետևաբար, խնդիր է առաջանում որոշել նշված գործերի ընդդատությունը:

Դիմումում նշված խնդիրը բարձրացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդմամբ¹³: Հաղորդմամբ նշվել է, որ ազատությունից զրկված անձանց համար իրենց իրավունքների իրացման և պաշտպանության տեսանկյունից անչափ կարևոր երաշխիք է ազատությունից զրկման վայրի վարչակազմի գործողությունների և անգործության կամ որոշումների բողոքարկման հնարավորությունը, որը կնպաստի ազատությունից զրկման վայրի վարչակազմի լիազորությունների բարեխիղճ կատարման ապահովմանը:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և այլ իրավասու մարմինների գործողությունները (անգործությունը) կամ որոշումները բողոքարկելու հնարավորությունն ամրագրում է ստացել նաև միջազգային չափանիշներում: Այսպես, ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 36-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա բողոքներով և պահանջներով դիմելու քրեակատարողական մարմիններին, դատական իշխանություններին կամ այլ իրավասու մարմիններին (...), իսկ 4-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր պահանջ կամ բողոք ենթակա է անհապաղ քննության (...):

¹³ Տե՛ս, Տարեկան հաղորդում՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ, 158-161 էջեր:

Եվրոպական բանտային կանոնների 70.1-ին կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան բողոքներ կամ պահանջներ ներկայացնելու քրեակատարողական հիմնարկի պետին կամ ցանկացած այլ իրավասու մարմին: Ըստ Եվրոպական բանտային կանոնների մեկնաբանությունների¹⁴ բողոքները քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կամ այլ իրավասու մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ պաշտոնական առարկություններ են, և ազատությունից զրկված անձինք պետք է հնարավորություն ունենան բողոքներ հասցեագրել քրեակատարողական համակարգի նկատմամբ հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող ցանկացած իրավասու մարմին: Կարգավորող դրույթները պետք է նախատեսեն բողոքարկման հատուկ ընթացակարգ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացել է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավասու մարմինների գործողությունների (անգործության) կամ որոշումների բողոքարկման մեխանիզմի բացակայության հարցը: Պետք է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի համաձայն՝ պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն օրենքով իրենց վերապահված գործողություններ, իսկ պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը կարող է բողոքարկվել դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին: ՀՀ քրեակատարողական օրենսգրքը, սակայն, չի անդրադառնում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և այլ իրավասու մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից կայացված որոշումների բողոքարկման հստակ կարգին, դրա ժամկետներին, բողոքին ներկայացվող պահանջներին, բողոքների քննարկման և դրանց լուծման կարգին, ինչպես նաև նշանակություն ունեցող այլ հարցերին:

Այսպես, գործող իրավական կարգավորումների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում օրենքով նախատեսել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և իրավասու այլ մարմինների գործողությունները,

¹⁴ Տե՛ս, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական պենիտենցիար կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae> կայքէջում՝ 31.03.2018թ.-ի դրությամբ:

անգործությունը կամ որոշումներն ազատությունից զրկված անձանց կողմից բողոքարկելու հստակ մեխանիզմ: Ընդ որում, բողոքարկման հնարավորությունը պետք է նախատեսվի նաև կալանավորված անձանց համար: Մեխանիզմը պետք է ներառի բողոքարկման ընթացակարգ, բողոքին ներկայացվող պահանջներ, ժամկետներ, բողոքարկման վարույթում բողոք ներկայացրած անձի իրավունքներ (օրինակ՝ վարույթի նյութերին ծանոթանալու իրավունք) և բողոքի քննարկման ընթացակարգ:

Ազատությունից զրկված անձանց բողոքարկման իրավունքի վերաբերյալ օրենսդրական ամրագրումներ կատարելիս պետք է հստակեցնել այն մարմինների շրջանակը, ովքեր իրավասու են քննարկել այդ բողոքները: Անհրաժեշտ է նաև ամրագրել բողոքների քննարկման առավելագույն ժամկետները՝ դրանք նախատեսելով ինչպես բողոքի քննարկումը սկսելու, այնպես էլ քննարկման արդյունքում վերջնական որոշում կայացնելու համար՝ անհարկի ձգձգումները բացառելու նպատակով:

Ազատությունից զրկված անձի կողմից համապատասխան բողոք ներկայացնելու համար ժամկետներ նախատեսելիս պետք է հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքների առկայության հնարավորությունը, որոնք կարող են խոչընդոտել ազատությունից զրկված անձի կողմից նախատեսված ժամկետներում բողոքն իրավասու մարմինն ներկայացնելը, ինչի արդյունքում անձը կզրկվի բողոքարկման հնարավորությունից: Ուստի, կարևոր է նաև անձի կողմից համապատասխան հիմքերի առկայության դեպքում բաց թողնված ժամկետը վերականգնելու օրենսդրական հնարավորության նախատեսումը:

Մեկ այլ կարևոր հարց է քրեակատարողական հիմնարկների կամ իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունված ակտերի դեմ ազատությունից զրկված անձանց դատական կարգով բողոքարկման կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

ՀՀ գործող քրեակատարողական օրենսգիրքն օրինականության սկզբունքին անդրադառնալիս չի նշում, թե բողոքները որ դատարանին են ընդդատյա՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության, թե վարչական դատարանին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն պատժի կատարման

հետ կապված գործերը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի լիազորությունների մեջ է մտնում դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցերի լուծումը:

Հաղորդմամբ նշվել է, որ անհրաժեշտ է կատարել նաև համապատասխան փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ նախատեսելով պատժի կատարման, ինչպես նաև անձին կալանքի տակ պահելու ընթացքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կամ իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունված ակտի դատական բողոքարկման ընթացակարգերի հատուկ կարգավորումներ, ազատությունից զրկված անձի կողմից բողոքարկման ժամկետներ, դատարանի կողմից հարցի քննարկման ժամկետներ, կայացվող դատական ակտի տեսակը, դրանով պայմանավորված՝ ակտի ուժի մեջ մտնելու ժամկետ, վերաքննության և վճռաբեկության կարգով դրանց բողոքարկումը:

Նշված գործերով դատական ակտի տեսակը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն դեպքերը, երբ ազատությունից զրկված անձի՝ բողոքով ներկայացրած պահանջի բավարարումը բողոքարկման վարույթի ընթացքում դառնում է ժամանակավրեպ: Օրինակ՝ ազատությունից զրկված անձը բողոքարկում է Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի աշխատակիցների անգործությունը կապված իրեն ցուցված դեղերը չտրամադրելու հետ, որոնք պետք է ընդունել հստակ ժամանակահատվածում կամ, օրինակ, ցավեր ունենալու պարագայում, սակայն մինչև դատարանի կողմից բողոքի քննարկման արդյունքում ակտ կայացնելը նշված դեղերի տրամադրման անհրաժեշտությունը վերանում է:

Հաղորդմամբ կարևորվել է այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկի և իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ իրենց կողմից կայացրած որոշման կամ ակտի բողոքարկման մեխանիզմի նախատեսումն էական նշանակություն կունենա ազատությունից զրկված անձանց իրավունքների պատշաճ իրացման համար: Նշվել է, սակայն, որ մեխանիզմը սահմանելիս հարկ է կատարել մանրակրկիտ ուսումնասիրություն և նախատեսել վերոշարադրյալ բոլոր հարցերի կապակցությամբ հստակ կարգավորումներ:

Միաժամանակ, պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկի և իրավասու այլ մարմինների գործողությունների, անգործության կամ իրենց կողմից կայացրած որոշման կամ ակտի բողոքարկման մեխանիզմի հստակ կարգավորումներ կատարելու անհրաժեշտությունը բխում է ՀՀ նախագահի դեռևս 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությունից, որով հաստատված հավելված 2-ի 5-րդ գլխի 5.4-րդ կետի 5.4.1-րդ ենթակետի համաձայն՝ անհրաժեշտ է միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա որոշակիացնել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների բողոքարկման կառուցակարգերը՝ հստակեցնելով բողոքների քննության ընդդատությունը: Նշված օրենսդրական փոփոխությունները կատարելու անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 483-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 19-րդ կետից, որի համաձայն՝ պետք է նախատեսել քրեակատարողական ծառայողների գործողությունների, անգործության կամ նրանց կողմից ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմներ՝ ընդդատյա դատարանի, բողոքներին ներկայացվող պահանջների, բողոքարկման ժամկետների հստակ ամրագրմամբ»:

Հարկ է նկատել նաև, որ խնդրի լուծման նպատակով դեռևս 2017 թվականի նոյեմբերին ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և հանրային քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր¹⁵, որոնք, սակայն, դեռևս չեն ընդունվել:

Խնդիրն անհրաժեշտ է դիտարկել վերը նշված կարգավորումների՝ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից: Այսպես.

¹⁵ <https://www.e-draft.am/projects/512/about>

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Արդար դատաքննության իրավունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Դատարան դիմելու և արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ իրավական կարգավորումների ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ անձն իր իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում կարող է դիմել դատարան՝ ներկայացնելով վերջինիս վերականգնման կամ այլ պահանջներ:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Իրավունքների և օրինական շահերի արդյունավետ իրականացումն անքակտելիորեն կապված է պետության կողմից անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և մեխանիզմներ սահմանելու հետ: Այսինքն, պետությունը պոզիտիվ պարտականություն է կրում ոչ միայն ամրագրել հիմնարար իրավունքները, այլ նաև սահմանել դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Դատարան դիմելու համար իրավական ակտերով ամրագրված են որոշակի կանոններ, որոնց պահպանումը պարտադիր է դատարան դիմող անձի համար: Այսպես, օրինակ, դատարան դիմելիս անձը դիմում է ոչ թե ցանկացած դատարան, այլ պարտավոր է դիմել այն դատարան, որն իրավասու է ըստ էության քննել և լուծել առկա վեճը: Այսինքն, կարող ենք նշել, որ արդար

դատաքննության և դատական պաշտպանության իրավունքի իրացման համար առաջին քայլերից մեկը դատարանի ընդդատությունը որոշելն է: Իրավաբանական գործերը լուծելու ծանրաբեռնվածության համաչափ և գիտականորեն հիմնավորված տարբեր իրավասություն ունեցող դատարանի միջև բաշխումը կարևոր նախապայման է արդարադատության մատչելիության տեսանկյունից¹⁶: Դատարանների միջև գործերի բաշխումը նաև կարևոր է գործի մասնագիտական առանձնահատկությունների հաշվի առնման և ընթացակարգային հատուկ կարգավորումների նախատեսման տեսանկյունից: Այսինքն, ընդդատությունը ինքնանպատակ չէ և գործի քննության հարցում ապահովում է մասնագիտական մոտեցում:

5. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ 1-ին մասի դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համապատասխանության հարցի լուծման խնդրանքով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական կարգավիճակի առանձնահատկությունը կանխորոշում է Պաշտպանի կողմից ուսումնասիրվող ցանկացած հարց մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման

¹⁶ [Քաղաքացիական և վարչական գործերի դատական ենթակայությունը որոշելու չափանիշները/](#) «Պետություն և իրավունք», Երևան, 2010, թիվ 2 (48), էջ 29-38:

հարթությունում դիտարկելու պահանջը: Այս տրամաբանությամբ էլ Մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի շրջանակները, սահմանափակվելով *նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով*, ուրվագծում են առհասարակ սահմանադրականության հարցի քննարկման բովանդակային սահմանները: Այս տեսանկյունից, անդրադարձ ենք կատարել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի¹⁷ ընդունման ընթացակարգային կողմին:

Այսպես, ՀՀ Ազգային ժողովի parliament.am կայքում հրապարակված՝ նախագծի սկզբնական տարբերակի, դրա ընդունման պատմության պաշտոնական տեղեկատվությունից պարզ է դառնում, որ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի լուծումները սահմանափակվում էին միայն Սահմանադրական օրենքի 79-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխությամբ, որով Կառավարության ներկայացուցչի՝ հարակից զեկուցմամբ հանդես գալու լիազորությունը սահմանվում էր որպես պարտադիր¹⁸: Ազգային ժողովի նիստերի իրավազորությանն առնչվող իրավական կարգավորումներ առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծը չի սահմանել. այդպիսիք նախագծի հեղինակի կողմից լրացվել են նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկման փուլում¹⁹:

Ազգային ժողովի կողմից հանրային լայն հետաքրքրություն ունեցող հարցերի վերաբերյալ ցանկացած նախագծի ընդունում և այդ նախագծով առաջարկվող լուծումների կապակցությամբ հանրային ոչ բավարար իրազեկվածությունը կարող են հանգեցնել այդ նախագծի, դրանով հետապնդվող նպատակի վերաբերյալ իրարամերժ կարծիքների և ոչ միանշանակ ընկալման՝ չփարատելով հասարակական տարբեր շրջանակների մտավախությունները: Նման իրավիճակ արձանագրվեց խնդրո առարկա նախագծի ընդունմամբ:

Մինչույն ժամանակ, Սահմանադրական դատարանը 2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշմամբ ուղղակիորեն անդրադարձել է օրենքի նախագծերի հանրային քննարկման ընթացակարգերի չպահպանման, Ազգային ժողովի կողմից դրանք արտահերթ նիստերում քննարկելու իրավաչափությանը՝

¹⁷ Այսուհետ՝ նախագիծ

¹⁸ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9859&Reading=1>

¹⁹ http://www.parliament.am/draftreading_docs6/2/P-315_DR2.pdf

մասնավորապես նշելով, որ. «...սահմանադիրն օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպումը և իրականացումը որպես օրենքների ընդունման ընթացակարգային սահմանադրական պահանջ չի դիտարկում: Հետևաբար, բարձրացված հարցն իր բնույթով ոչ թե սահմանադրահրավական, այլ օրենսդրական կարգավորման բնագավառին է առնչվում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ օրենքների ընդունման խորհրդարանական կամ ինչպես հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: Վերջիններիս թվին են դասվում միայն այն կանոնների խախտումները, որոնք **ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը»:**

Հետևաբար, կարծում ենք՝ նախագծի ընդունման ընթացակարգային հարցերը, իրավական լուծումների բովանդակության վրա ունեցած ազդեցությունը և դրանց սահմանադրականությունը կարող են դիտարկվել Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ առաջ քաշված չափանիշների հետ համադրությամբ:

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և 155-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 2019 թվականի մայիսի 7-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի²⁰ 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և 155-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասին և 61-րդ հոդվածին համապատասխանության հարցի լուծման խնդրանքով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական կարգավիճակի շրջանակների հաշվառմամբ՝ դիմումով վիճարկման առարկա դրույթների իրավաչափությունը, որոնցով ամրագրվում է էական կարգապահական խախտման հասկացությունը, ինչպես նաև սահմանվում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է, դիտարկվել է անձի դատական պաշտպանության, արդար դատաքնության սահմանադրական իրավունքների, իրավական որոշակիության սկզբունքի, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր օրենքներով սահմանելու սահմանադրական պահանջի համատեքստում:

Դիմումով վիճարկվող կարգավորումների իրավաչափությունը հարկ է դիտարկել երկու փոխկապակցված խնդիրների, դրանք են՝ դատավորի

²⁰ Այսուհետ՝ Սահմանադրական օրենք

կարգապահական պատասխանատվության հիմքերի որոշակիության և որոշումների բողոքարկման պատշաճ ընթացակարգերի առկայության շրջանակում:

Այսպես, Սահմանադրական օրենքի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սահմանող 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ էական կարգապահական խախտում է դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

Բարձրացված երկու խնդիրները՝ թե՛ դատավորին պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքի՝ էական կարգապահական խախտման իրավական բովանդակության անորոշությունը, թե՛ բողոքարկման ընթացակարգի բացակայությունն ինքնին առաջ են բերում անձի սահմանադրական իրավունքների հարց: Խնդիրն առավել առարկայական է, երբ վերը նշված խնդիրները համակցության մեջ հանգեցնում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի՝ միջազգային և սահմանադրական չափանիշներին անհամապատասխանության:

Դիմումով վիճարկվող դրույթները փաստացի սահմանափակում են անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքներն այնքանով, որքանով Բարձրագույն դատական խորհրդի որոշման վիճարկումը հնարավոր չէ, քանի որ այդ որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման բողոքարկման մեխանիզմի ապահովումը չափազանց կարևոր է. այն ուղղակիորեն կապված է դատական անկախության, համակարգի ինքնակառավարման և հաշվետվողականության ապահովման հետ:

Կարգապահական որոշումների բողոքարկման հնարավորության սահմանման մասին են վկայում մի շարք միջազգային փաստաթղթեր: Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) Դատական համակարգի

անկախության եվրոպական չափանիշների վերաբերյալ 2008 թվականի զեկույցում սահմանվում է, որ Վենետիկի հանձնաժողովը *աջակցում է դարավորի անփոփոխելիության սկզբունքը և հետևողականորեն սահմանում է, որ կարգապահական գործընթացներում պետք է կարգապահական մարմինների որոշումների բողոքարկման նպատակով դատարան դիմելու հնարավորություններ լինեն*²¹:

Նախարարների կոմիտեի 2010 թվականի Rec (2010)12 դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ հանձնարարականի²² 69-րդ կետի համաձայն՝ կարգապահական վարույթները պետք է իրականացվեն անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ արդար դատաքննության բոլոր երաշխիքների ապահովմամբ, ինչպես նաև դատավորը պետք է ունենա այդ որոշումը կամ սանկցիան վիճարկելու հնարավորություն: ՄԱԿ-ի՝ Դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքների²³ 20-րդ կետի համաձայն՝ *կարգապահական, կասեցման կամ հեռացման վերաբերյալ որոշումները ենթակա են անկախ վերանայման*:

Համապատասխան չափանիշներ և ցուցիչներ են հարկավոր դատավորների կարգապահական պատասխանատվության համար, քանի որ դատավորների մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարումը հանրության կողմից դիտվում է դատարանների վստահության համար կարևոր և կարող է ազդել դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վրա: *Կարգապահական պարասխանատվության միջոցները հարկավոր են, սակայն դրանց սահմանման համար անհրաժեշտ է զգուշավորություն՝ կարևորելով դատական անկախության պաշտպանությունը: Դատավորների*

²¹ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) Դատական համակարգի անկախության եվրոպական չափանիշներ վերաբերյալ 2008 թվականի զեկույց [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD\(2008\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD(2008)002-e) էջ 5

²² Նախարարների կոմիտեի 2010 թվականի Rec (2010)12 դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ հանձնարարական <https://rm.coe.int/16807096c1>

²³ ՄԱԿ-ի Դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքներ <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/IndependenceJudiciary.aspx>

կարգապահական պատասխանատվության ոչ պատշաճ համակարգը կարող է սպառնալ դատական անկախությանը²⁴:

Հաշվի առնելով, որ կարգապահական պատասխանատվությունն անմիջապես կապված է դատավորի, հետևաբար և նրա լիազորությունների իրականացման հետ՝ միջազգային մի շարք սկզբունքներ անդրադարձել են կարգապահական պատասխանատվության դեպքում դրա իրականացման գործընթացների հարցին դատական համակարգի անկախության և արդարադատության իրականացման անշեղ գործընթացի ապահովման տեսանկյունից:

Մասնավորապես, միջազգային կարգավորումները կարգապահական պատասխանատվության հարցը դիտարկում են դատավորի պաշտոնավարման, վերջինիս անփոփոխելիության սկզբունքի շրջանակում: Թեև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու արդյունքում վերջինիս պաշտոնավարման դադարեցումը նշյալ սկզբունքի խախտում չէ, սակայն գործընթացները պետք իրականացվեն՝ հստակորեն պահպանելով անձի իրավունքները:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2001 թվականի Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին թիվ 1 կարծիքի²⁵ 59-րդ կետը սահմանում է, որ անփոփոխելիության սկզբունքի բացառությունների առկայությունը, հատկապես, եթե դրանք բխում են կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու պահանջից, անմիջականորեն հանգեցնում է այն հարցին, թե որ մարմնի կողմից կամ ինչ մեթոդով և ինչ հիմքով դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի, ինչպես նաև այս ոլորտում առկա խնդիրների և այլ միջազգային չափորոշիչների համապատասխանության մասին թիվ R (94) հանձնարարականի 6-րդ սկզբունքի

²⁴https://www.ency.eu/images/stories/pdf/GA/Hague/encj_report_minimum_standards_v_adopted_ga_june_2015.pdf էջ 10:

²⁵ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2001 թվականի դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին թիվ 1 կարծիք <https://www.legal-tools.org/doc/ca5224/pdf/>

համաձայն՝ պետությունները պետք է դիտարկեն օրենքով հատուկ իրավասու մարմին ստեղծելու հարցը, որը պատասխանատու է կիրառելու կարգապահական պատասխանատվության միջոցներ, եթե դրանք չեն իրականացվում դատարանի կողմից: *Նման մարմնի որոշումները պետք է վերահսկվեն վերադաս դատական մարմնի կողմից, կամ այդ մարմինը հենց ինքը պետք է հանդիսանա վերադաս դատական մարմին:* Մասնավորապես՝ հանձնարարականի 6-րդ սկզբունքի 3-րդ կետի համաձայն՝ օրենքը պետք է հստակ սահմանի համապատասխան ընթացակարգեր, **որպեսզի պատասխանատվության ենթարկվող դատավորն առնվազն ունենա Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտահ ընթացակարգի ապահովման բոլոր պահանջները**, օրինակ՝ գործը պետք է լսվի ողջամիտ ժամկետում, և նրանք պետք է իրավունք ունենան պաշտպանության իրավունք, հնարավորություն պատասխանել ցանկացած մեղադրանքի:²⁶

Բողոքարկման գործընթացի վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ամրագրված սկզբունքների համաձայն՝ կարգապահական գործընթացներում ենթադրյալ կարգապահական պատասխանատվության ենթակա դատավորը պետք է ունենա բողոքարկելու հնարավորություն՝ իր հիմնական իրավունքների իրականացման հնարավորությամբ:

«Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Խնդրո առարկա կարգավորումների պարագայում ստացվում է, որ դատական պաշտպանության իրավունքը սահմանափակվում է դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց դեպքում: Ավելին, Սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 8-րդ մասով ամրագրված՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի Սահմանադրական դատարան դիմելն ամբողջությամբ չի ապահովում անձի դատական պաշտպանության լիարժեք իրականացումը, քանի որ ոչ բոլոր դեպքերում է, որ վիճարկման հիմք է հանդիսանում Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված դեպքը: Այսինքն՝ ոչ բոլոր

²⁶ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի, ինչպես նաև այս ոլորտում առկա խնդիրների և այլ միջազգային չափորոշիչների համապատասխանության մասին թիվ R (94) հանձնարարականի [https://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR\(94\)12e.pdf](https://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR(94)12e.pdf)

դեպքերում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը ենթակա սահմանադրականության համապատասխանության հարցի քննության:

Բողոքարկման իրավունքի բացակայությունը ոչ միայն խնդրահարույց է անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից, այլև ավելի արդիական է դառնում գործող կարգավորումների պարագայում, երբ որպես դատավորի լիազորությունների դադարեցման հիմք՝ *էական կարգապահական խախտում է համարվում դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ*: Էական կարգապահական խախտումը, մասնավորապես՝ «դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ» ձևակերպման մասով, ընդհանրական և գնահատողական է, ինչը կարող է գործնականում հայեցողական կիրառության տեղիք տալ, որպիսի մտահոգությունն արտահայտվել է նաև միջազգային մի շարք փաստաթղթերում:

Այս դրույթի կիրառությանն առնչվող՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի այլ կարգավորումների համադիր ուսումնասիրությունից բխում է, որ որպես այդպիսի խախտում չեն կարող հանդես գալ, օրինակ, Սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջների խախտումը, ինչը դատավորի լիազորությունների դադարեցման ինքնուրույն հիմք է՝ համաձայն սահմանադրական օրենքի 159-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի:

Միևնույն ժամանակ, ենթադրվում է, որ «էական կարգապահական խախտումը» պետք է մեկնաբանվի և կիրառվի դատավորի կարգապահական պատասխանատվության ընդհանուր հիմքերի շրջանակներում՝ միաժամանակ տարբերակվելով իր՝ առավել խիստ կարգապահական տույժ ենթադրող բնույթով:

Այս առումով, հարկ է նկատել, որ Ղրղզստանի՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական կարգավորումների փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ կարծիքում ընդունելի է համարվել այն մոտեցումը, ըստ որի՝ *սահմանադրական օրենքում որպես դատավորի լիազորությունների դադարեցման հիմք՝ ամրագրվել է վերջինիս կողմից «պարբերաբար» կամ*

«կոպիտ» խախտման բնորոշումը: Միևնույն ժամանակ, կարծիքում նշվել է, որ կարգապահական պատասխանատվության հիմքերը բավական լայն են ձևակերպված, և առավել որոշակի ցանկ պետք է նախատեսվի՝ հղում կատարելով օրենքի կոնկրետ դրույթներին²⁷:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն իր կարծիքի 65-րդ կետում վերահաստատել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ձևակերպումների որոշակիության վերաբերյալ նախկինում արված իր դիրքորոշումները. «(...) **այն վարքագիծը, որը հիմք է կարգապահական վարույթի պետք է սահմանված լինի բավարար հստակությամբ, որպեսզի վերաբերելի անձի համար կանխատեսելի լինեն իր գործողությունների հետևանքները և նա կարողանա դրանց հիմքով իրականացնել իր գործողությունները:** Կարգապահական վարույթի հիմքերի առավել կոնկրետ և մանրամասն կարգավորումները կօգնեն նվազեցնել հայեցողությունն ու սուբյեկտիվությունը դրանց կիրառման ընթացքում»²⁸:

Ավելին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքի 63-րդ կետում նշվում է, որ **դատավորի վարքագծի կանոնների վերաբերյալ հողվածներում գործածված որոշ ձևակերպումներ բավարար որոշակի չեն:** Մասնավորապես, (...) **«դատավորի կարգավիճակին չհամապատասխանող կամ դրա բարձր հեղինակությունը նսեմացնող»** կամ «դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահությունը

²⁷ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)018-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)018-e) կետ 23

²⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ CDL-AD(2017)019 կարծիքի 65-րդ կետը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e):

Տե՛ս նաև Ղրղզստանի Հանրապետության դատավորների կարգապահական պատասխանատվության մասին օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2014 թվականի հունիսի 16-ի թիվ CDL-AD(2014)018 համատեղ կարծիքի 24-րդ կետը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)018-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)018-e):

Տե՛ս նաև «Դատական և դատախազական բարձր խորհուրդների մասին» Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2014 թվականի մարտի 24-ի թիվ CDL-AD(2014)008 կարծիքի 90-րդ կետը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)008-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)008-e):

նվազեցնող վարքագիծ», ինչպես նաև «գերծ մնալ այնպիսի հարաբերություններից և դատավորի կարգավիճակի հետ չհամապատասխանող վարքագծից, որոնք կարող են նսեմացնել նրա հեղինակությունը, պատիվն ու արժանապատվությունը»: Այս կարգավորումները ոչ միայն չափից դուրս լայն են, այլ նաև մեծապես համընկնող: Սրանից պետք է խուսափել²⁹: Բացի այդ, դատավորների կարգապահական պատասխանատվության և գնահատման վերաբերյալ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետության օրենքների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ CDL-AD(2015)042 կարծիքի 36-րդ կետում նշվում է, որ «դատարանի և դատական գործունեության հեղինակությունը նսեմացնող» հասկացությունը չափազանց լայն է³⁰:

Գործնականում դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող վիճահարույց այս նորմը չի բավարարում որոշակիության պահանջը, ուստի կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը, որը կարող է նաև լիազորությունների դադարման հիմք հանդիսանալ, գործնականում շատ հաճախ որոշումները բողոքարկման պատճառ կարող է հանդիսանալ:

Անդրադառնալով որոշակիության խնդրին՝ հարկ է ընդգծել, որ 2016 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1270 որոշմամբ դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի և մատչելի:

²⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ CDL-AD(2017)019 կարծիքի 63-րդ կետը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e):

³⁰ Տե՛ս Դատավորների կարգապահական պատասխանատվության և գնահատման վերաբերյալ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետության օրենքների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ CDL-AD(2015)042 կարծիքի 36-րդ կետը, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2015\)042-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)042-e):

«Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՌ-630, ՄԴՌ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Իրավական որոշակիությանն է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք որոշումներով: Այսպես, Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը ևս արձանագրել է, որ օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները³¹:

Ավելին, Եվրոպական դատարանն, անդրադառնալով օրինականության պահանջին, հայտնել է, որ վերջինս վերաբերում է ոչ միայն ներպետական օրենսդրությունում համապատասխան իրավական հենքի առկայությանը, այլև՝ «օրենքի որակին», որը պետք է լինի որոշակի, հետևանքները կանխատեսելի, ինչպես նաև հասանելի անձանց շրջանակին, որոնց վերաբերելի է, որպեսզի վերջիններս կարողանան կանխորոշել իրենց արարքների հետևանքները³²: Ըստ այդմ, Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով Եվրոպական դատարանը սահմանել է երեք սկզբունք՝ առաջին սկզբունքը, որը կիրառում է Սանդեյն ընդդեմ Մեծ Բրիտանիայի³³ գործով վճռում այն է, որ միջամտությունը պետք է որոշակի հիմք ունենա ներպետական օրենսդրության մեջ: Եվրոպական դատարանի կողմից մատնանշված երկրորդ սկզբունքի համաձայն՝ օրենքը պետք է մատչելի (հասանելի) լինի՝ քաղաքացին

³¹ Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday times v. The United Kingdom) գործով Եվրոպական դատարանի վճռով, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

³² Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Silver and Others v. the United Kingdom) գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռ գանգատ թիվ [7136/75](#)):

³³ Սանդեյն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Sunday times v. The United Kingdom) գործով վճիռ, գանգատ թիվ 6538/74 կետ 47:

պետք է կարողանա ունենալ ցուցում, որը համապատասխանում է տվյալ գործի համար կիրառելի իրավական կանոններին³⁴:

Երրորդ սկզբունքն այն է, որ նորմը չի կարող դիտվել որպես «օրենք», քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն ընձեռի կարգավորել իր վարքագիծը. վերջինս պետք է կարողանա, եթե անհրաժեշտ լինի համապատասխան խորհուրդներով, տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողության արդյունքում³⁵:

Հետևաբար, խնդրո առարկա կարգավորումների իրավաչափության հարցը պետք է դիտարկվի նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր օրենքներով սահմանելու և իրավական որոշակիության սահմանադրական պահանջների շրջանակներում:

Այսպիսով, խնդրո առարկա կարգավորումների և դրանց իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ կատարված վերլուծությունից կարելի է եզրահանգել, **խնդրո առարկա իրավակարգավորումներն այնքանով, որքանով Սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածով ամրագրված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է, այսինքն՝ բողոքարկման մեխանիզմը բացակայում է, հանգեցնում է դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման: Բողոքարկման ընթացակարգի բացակայությունն անձի իրավունքների ապահովման տեսանկյունից առավել խնդրահարույց է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացող էական կարգապահական խախտման անհստակության և որոշակիության բացակայության պարագայում:**

Խնդրո առարկա կարգավորումների՝ ՀՀ Սահմանադրության և միջազգային սկզբունքների համատեքստում ուսումնասիրությունից կարելի է, որ անհրաժեշտ

³⁴ Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Silver and Others v. the United Kingdom) գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռ գանգատ թիվ [7136/75](#)), կետ 86-87:

³⁵ Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Silver and Others v. the United Kingdom) գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռ գանգատ թիվ [7136/75](#)), կետ 88:

է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշման բողոքարկման այնպիսի մեխանիզմի սահմանում, որպեսզի լիարժեքորեն ապահովվի դատավորի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքների իրականացումը, մասնավորապես՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների ապահովումը:

2. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 10-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ, 123-րդ, 127-րդ, 131-րդ հոդվածներով, 2019 թվականի մայիսի 7-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի³⁶ 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 10-րդ մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցի լուծման խնդրանքով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշման շրջանակներում դիմումով վիճարկման առարկա դրույթի իրավաչափությունը, որով տրանսպորտային միջոցների պետական գրանցումը մերժելու հիմք է օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը չներկայացնելը, դիտարկվել է անձի սեփականության իրավունքի հարգման համատեքստում:

Այսպես, Օրենքի՝ «Տրանսպորտային միջոցների պետական գրանցումը, պետական հաշվառումը և սահմանափակումները» վերտառությամբ 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքը ենթակա է (պետք է

³⁶ Այսուհետ՝ Օրենք

ներկայացվի) ճանապարհային ուստիկանությունում պետական գրանցման կողմերի՝ գործարքն ստորագրելու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում, իսկ տրանսպորտային միջոցը «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով կամ ֆիզիկական անձանց կողմից ազատ շրջանառության նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծված լինելու դեպքում՝ հայտարարագրելու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ տրանսպորտային միջոցը խոտանելու հետ կապված հաշվառումից հանելու դեպքերի: Տրանսպորտային միջոցների պետական գրանցումն ու պետական հաշվառումն իրականացվում են տրանսպորտային միջոցը (կամ ճանապարհային ուստիկանության վարչական մասի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրն սպասարկող իրավասու ստորաբաժանման տրամադրած տրանսպորտային միջոցի տվյալների վերաբերյալ տեղեկանքը) և օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը ճանապարհային ուստիկանություն ներկայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Միաժամանակ, Օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների պետական գրանցումը մերժվում է, ի թիվս այլ հիմքերի, ներկայացված չեն օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

Օրենսդրական կարգավորումների համադիր վերլուծությունից ստացվում է, որ տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի գրանցման համար օրենքով նախատեսված է առավելագույն ժամկետ, որի չպահպանումը հանգեցնում է այդ իրավունքի գրանցումը մերժելուն: Սեփականության իրավունքի պետական գրանցման համար ժամկետային սահմանափակում նախատեսող կարգավորումը, սակայն, չի ամրագրում որևէ բացառություն կամ գրանցման համար անհրաժեշտ պայմանի վերականգնման հնարավորություն: Նշվածը կարող է ստեղծել օրենսդրական խոչընդոտ **անձի՝ սեփականության նկատմամբ օրինական ակնկալիքի պետական ճանաչման և երաշխավորման համար:**

Դիմումով վիճարկվող դրույթները փաստացի սահմանափակում են անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքն այնքանով, որքանով գույքի պետական գրանցման համար նախատեսված ժամկետի բացթողնման հիմքով գրանցման մերժումը որևէ կերպ վերականգնելի կամ բացառությունների ենթակա չէ:

Գործնականում խնդրո առարկա կարգավորումները կարող են հանգեցնել այնպիսի փակուղային իրավիճակի, ինչպիսին տվյալ դեպքում վարչական ակտի կայացման հիմքով «Ավտոմեքենայի աճուրդային ավտոմեքենայի առքուվաճառքի» պայմանագրի անվավերությունն է, որը, սակայն, չի հանգեցրել վարչական ակտի վերացման՝ օրենսդրական նման հիմք բացակայության պայմաններում³⁷:

Այսպիսով, հաշվի առնելով, որ վիճարկվող կարգավորումներն առնչվում են անձի սեփականության իրավունքին՝ խնդրի իրավական վերլուծությունն իրականացվել է գույքի նկատմամբ օրինական ակնկալիքի պաշտպանություն և պետական միջամտության համաչափության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

Օրինական ակնկալիքի իրավունքին անդրադարձ է կատարվել նաև Սահմանադրական դատարանի որոշումներում, որտեղ դատարանը փաստել է **սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը**: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշմամբ, անդրադառնալով օրինական ակնկալիքի հարցին, արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում անդրադարձել է այն պահանջներին, որոնց պարագայում ապագայում բավարարման նկատմամբ անձը կարող է վիճարկել առնվազն «լեգիտիմ ակնկալիքի» առկայությունը³⁸: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ օրինական

³⁷ Բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի, համաձայն որի՝ եթե վարչական ակտը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք ակտի որևէ մասով ուժի մեջ մտնելը կապում են որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման հետ, ապա վարչական ակտն այդ մասով ուժի մեջ է մտնում համապատասխան պայմանի կամ հանգամանքի առաջացման պահից (պայմանով ակտ):

³⁸ Տրգոն ընդդեմ Խորվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009 թվականի հունիսի 11-ի վճիռ, գանգատ թիվ 35298/04, կետ 44 և Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի (Kopecký v. Slovakia) գործով 2004 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 44912/98, կետ 35:

ակնկալիքը չի կարող առանձին հանդես գալ, այն պետք է կցվի գույքային շահին, որը պետք է ինքնին բավականաչափ հաստատված լինի³⁹: Այսինքն՝ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումների ուժով պետությունը երաշխավորում է անձի՝ սեփականության իրավունքի նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացումը, ի թիվս այլնի՝ վերջինիս իրացման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման միջոցով⁴⁰:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Նման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, երբ պետությունը համապատասխան տարածքում կառուցապատման սահմանափակում է նախատեսում կամ մերժում է տրանսպորտային միջոցի գրանցումը և այլն⁴¹:

Նման սահմանափակումները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում քննարկման առարկա են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում՝ որպես գույքի օգտագործման նկատմամբ հսկողության միջոց (control of the use of property):

Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին

³⁹ Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի (Kopecký v. Slovakia) գործով 2004 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 44912/98, կետեր 45-53;

⁴⁰ ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՌ-1448 որոշում:

⁴¹ Վ. Պողոսյան և Ն. Սարգսյան «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրություն. համառոտ պարզաբանումներ», 2016 թվական, Երևան:

համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, որը երաշխավորում է սեփականության իրավունքը, ներառում է իր մեջ երեք տարբեր կանոն: Եվրոպական դատարանը նման վերլուծության է ներկայացրել Սպորրոնգն ընդդեմ Շվեդիայի գործով վճռում⁴²: Ի թիվս այլնի՝ Ջեյմսն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության վճռում⁴³ Եվրոպական դատարանը ևս անդրադարձել է նախադեպային իրավունքով հավաստված այս երեք կանոնին, որոնք են՝ սեփականության իրավունքի նկատմամբ հարգանքը, սեփականությունից զրկելը որոշակի պայմանների ենթարկեցնելը, *ընդհանուր շահին համապատասխան գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պետության իրավասությունը*: Եվրոպական դատարանը բազմաթիվ վճիռներում դիրքորոշում է հայտնել, որ վերոնշյալ երկրորդ և երրորդ կանոններն առնչվում են սեփականության իրավունքին միջամտությանը և այդպիսով պետք է մեկնաբանվեն առաջին կանոնում ամրագրված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո:⁴⁴

Երրորդ կանոնը ներառում է պետության գույքի օգտագործման վերահսկողության իրավունքը: Գույքի օգտագործումն ավելի ընդհանուր տերմին է, որն ընդգրկում է գույքի նկատմամբ տարբեր տեսակի միջամտություններ: Պետությունը կարող է վերահսկել գույքի օգտագործումն այնքանով, որքանով անհրաժեշտ է ընդհանուր շահի համար⁴⁵: Այս համատեքստում, հարկ է ընդգծել Եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ ընտրված միջոցների և նախատեսված նպատակների միջև պետք է լինի արդար հավասարակշռություն⁴⁶:

⁴² Սպորրոնգն ընդդեմ Շվեդիայի (Sporrong and Lönnroth v. Sweden) 1982 թվականի սեպտեմբերի 23-ի գործով վճիռ, գանգատ թիվ 7151/75, կետ 61:

⁴³ Ջեյմսն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (James and others v. The United Kingdom) 1986 թվականի փետրվարի 21-ի գործով վճիռ, գանգատ թիվ 8793/79, կետ 37:

⁴⁴ Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի (Iatridis v. Greece) 1999 թվականի մարտի 25-ի գործով վճիռ, գանգատ թիվ 31107/96, կետ 55 և Ջեյմսն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (James and others v. The United Kingdom) 1986թ. փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 8793/79:

⁴⁵ <https://sites.uclouvain.be/cridho/documents/Download.Rep/NetworkCommentaryFinal.pdf>

⁴⁶ Վան Մարլե և այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Van Marle And others v. the Netherlands) գործով 1986 թվականի հունիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 8543/79, կետ 43:

Օրենքի կարգավորումը պետության գույքի օգտագործման վերահսկողության իրավունքի հիմնական սահմանափակումն է: Գույքի նկատմամբ միջամտությունը պետք է բավականաչափ կարգավորված լինի օրենքով, որը ներպետական օրենսդրական դաշտում և պրակտիկայում պահանջում է բավարար հստակություն և կանխատեսելիություն: Եվրոպական դատարանը Հենթրիչն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճռում, անդրադառնալով գույքի օգտագործման նկատմամբ պետության վերահսկողության միջամտության հարցին (երրորդ կանոն), հայտնել է դիրքորոշում՝ սահմանելով, որ գույքի օգտագործման նկատմամբ պետական վերահսկողությունը պետք է փորձարկվի հետևյալ երեք չափանիշներով՝

- միջամտության նպատակ,
- միջամտության օրինականություն,
- միջամտության համաչափություն⁴⁷:

Տվյալ դեպքում, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ուղղված է հատկապես տվյալ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացման ու պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովմանը: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից է բխում օրենսդրի իրավաչափ նպատակն իրավունքների ծագումը գրանցմամբ պայմանավորելով ու գրանցման ժամկետ սահմանելով: Այն նպատակ է հետապնդում պետության համար գույքի սեփականատեր հանդիսացող անձի որոշակիացում՝ ապահովելով, ի թիվս այլնի, գույքային իրավունքների պաշտպանություն և երաշխավորում: Այդ իսկ պատճառով սահմանված ժամկետները (տվյալ դեպքում, 15-օրյա ժամկետը) ևս միտված են իրավունքի պաշտպանության ու երաշխավորման ապահովելուն: Սահմանելով գույքի պետական գրանցման պարտադիր պահանջ՝ օրենսդիրը միաժամանակ նախատեսել է այդ պահանջը չկատարելու իրավական հետևանքներ:

Այս կապակցությամբ հարկ է, սակայն, ընդգծել, որ իրավաչափ նպատակ հետապնդող այս կարգավորումը պետք է համահունչ լինի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերոնշյալ համաչափության սկզբունքին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված

⁴⁷ Հենթրիչն ընդդեմ Ֆրանսիայի (Hentrich v. France) գործով 1994 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռ, գանգատ թիվ 13616/88:

համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Խնդրո առարկա կարգավորումն ըստ էության սահմանված միջոց է այդ նպատակին հասնելու համար, սակայն գործնականում առաջացած իրավիճակներին պատշաճ արձագանքելու համար այն պետք է լինի անհրաժեշտ և համաչափ: Օրենսդրական այդ միջոցը, որով պետական գրանցման 15-օրյա ժամկետի բացթողնման արդյունքում պայմանագիրն առոչինչ է ճանաչվում, իսկ պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսացող վարչական ակտը մնում է անորոշ, գործող կարգավորումների պարագայում միակն է, և ավելի մեղմ միջամտություն ենթադրող կամ ժամկետների բացթողնման դեպքերում դրանց վերականգնման մեխանիզմներ չկան: Սա կարող է համաչափ չլինել հատկապես այնպիսի իրավիճակներում, երբ ժամկետի չպահպանելն անձի մեղավորությունը չէ:

«Սահմանադրական դատարանը 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1448 որոշմամբ, քննարկման առարկա դարձնելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի համանման կարգավորումների սահմանադրականությունը, եզրահանգել է, որ *պետության պարտականությունն է սահմանել սեփականության օտարման այնպիսի արդյունավետ կառուցակարգեր և կարգավորումներ, որոնք նվազագույնս կծանրաբեռնեն գույքը ձեռքբերողներին՝ կապված գործարքների կնքման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ*⁴⁸:

Ավելին, **սույն գործով վիճարկվող դրույթները համակարգային առումով փոխկապակցված են ՍԴՈ-1448 որոշմամբ հակասահմանադրական ճանաչված օրենսդրական կարգավորումների հետ, քանի որ նույնությամբ արտացոլում են այն ոչ իրավաչափ մոտեցումը, որով պետական գրանցման համար դիմելու ժամկետային սահմանափակման հիմքով անձի սեփականության իրավունքը չի գրանցվում և չի ճանաչվում պետության կողմից:**

Հետևաբար, կարծում ենք, որ խնդրո առարկա կարգավորումների իրավաչափության հարցը **սեփականության իրավունքի հարգման**

⁴⁸ «Սահմանադրական դատարանի 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1448 որոշում:

տեսանկյունից իրավական նույն կանոնների և սկզբունքների կիրառմամբ պետք է որոշվի, ինչ նախանշվել է հենց Սահմանադրական դատարանի կողմից:

Այսպիսով, խնդրո առարկա կարգավորումների և դրանց իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ կատարված վերլուծությունից կարելի է եզրահանգել, խնդրո առարկա իրավակարգավորումներն այնքանով, որքանով տրանսպորտային միջոցի նկատմամբ անձի սեփականության իրավունքի գրանցման ժամկետային սահմանափակում ամրագրելով, որևէ բացառություն կամ պայմանի վերականգնման հնարավորություն չեն նախատեսում, կարող են հանգեցնել սեփականության իրավունքին անհամաչափ միջամտության:

3. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ, 25-րդ և 71-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ին ընդունված ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի լուծման խնդրանքով:

Դիմումում Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հետ փոխկապակցված 2-րդ հոդվածի 10-րդ մասի սահմանադրականության հարցը քննարկվել է այնքանով, որքանով համաներման կիրառմամբ պատժից ազատելու դեպքում

պարտադիր պայման սահմանված չէ տուժողին պատճառված վնասը հատուցած լինելու վերաբերյալ, ավելին՝ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ դատավճռով հաստատված տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Դիմող կողմի պնդմամբ՝ վերոնշյալ նորմերը առերևույթ (*prima facie*) հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61-րդ, 63-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ *տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:*

Ավելին, Օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է այն դեպքերը, երբ համաներումը չի կիրառվում: Ըստ այդմ, Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և 2-րդ հոդվածի 10-րդ մասի բովանդակության համադիր վերլուծությունից կարող ենք փաստել, որ տուժողին պատճառված վնասի հատուցումը համաներում կիրառելու համար պարտադիր պայման չէ:

Ստացվում է, որ մի կողմից պետությունը՝ համաներման մասին օրենքով անձին տալիս է արտոնություն օրենքով ամրագրված որոշակի պայմաններին բավարարելու դեպքում ազատվել պատժից, միևնույն ժամանակ, շարունակում են գործել տուժողի իրավունքները, որոնցից է նաև պատճառված վնասի դիմաց հատուցում ստանալու իրավունքը: Տվյալ պարագայում, հարցն անհրաժեշտ է դիտարկել համաներմամբ պատժից ազատվող անձի և տուժողի իրավունքների համադրման տեսանկյունից: Տուժողի՝ վնասի հատուցման իրավունքի իրացման եղանակներից է դատարանի միջոցով վնասի հատուցում ստանալը, ուստի խնդիրն անհրաժեշտ է դիտարկել արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից:

Պետությունը հանդես է գալիս որպես մարդու հիմնարար իրավունքների երաշխավորող, որի իրականացման եղանակներից մեկն էլ իրավական

պաշտպանությունն է դատարանների միջոցով: Հենց այս երաշխիքն էլ ամրագրվել է Սահմանադրության 61-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արդյունավետ դատական պաշտպանությունը հանդիսանում է հիմնական եղանակներից մեկը, որի միջոցով իրականացվում է Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված սեփականության իրավունքի առանց խոչընդոտների իրականացումը և այդ իրավունքի պաշտպանությունը:

Այսինքն, Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասից և 2-րդ հոդվածի 10-րդ մասից կարող ենք բխեցնել, որ չնախատեսելով տուժողին պատճառված վնասի հատուցումը՝ որպես համաներում կիրառելու պարտադիր պայման, որպես տուժողի իրավունքի իրացման ճանապարհ՝ օրենքը նախատեսում է տուժողի կողմից հավելյալ գործողության կատարում, այն է՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում հայց հարուցելը:

Այս պարագայում խնդիր է առաջանում գնահատել, թե որքանով է նշված կառուցակարգը բավարար և իրավաչափ՝ տուժողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Այսպես, դատական պաշտպանության իրավունքի հետ սերտորեն փոխկապակցված է նաև անձի հիմնական իրավունք համարվող՝ արդար դատաքննության իրավունքը, որն իր ամրագրումն է ստացել Սահմանադրության 63-րդ հոդվածում: Վերջինիս 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:»

Անդրադառնալով այս իրավունքին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝

արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները⁴⁹:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր «քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների» հետ կապված ցանկացած պահանջ դատարանում կամ տրիբունալում ներկայացնելու իրավունք: Այդպիսով, 6-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է «դատարանի իրավունքը», որում մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործով վարույթ հարուցելու իրավունքը, դրա մի մասն է⁵⁰: Մինևույն ժամանակ, Եվրոպական դատարանը հավելել է, որ դատարանների մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել անուղղակի սահմանափակումների⁵¹: Այնուամենայնիվ, կիրառվող սահմանափակումները չպետք է սահմանափակեն կամ նվազեցնեն անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որևէ սահմանափակում համատեղելի չի լինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում «իրավաչափ նպատակ» և եթե «գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն»⁵²:

Վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ վերը նշված սահմանափակումները կարող են սահմանվել միայն խիստ անհրաժեշտության և «իրավաչափ նպատակ» հետապնդելու պայմաններում: Այսինքն, ամեն դեպքում պետությունը պետք է փորձի կատարել ամեն ինչ, որ իր նպատակին հասնի առանց անձի արդար դատաքննության իրավունքը սահմանափակելու:

Դատարան դիմելու և արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ իրավական կարգավորումների ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ անձն իր իրավունքի ենթադրյալ

⁴⁹ Տե՛ս՝ Բելեշը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության 2003 թվականի փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 47273/99, կետ 49

⁵⁰ Տե՛ս՝ Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետ 36

⁵¹ Տե՛ս՝ նույն տեղում, կետ 38

⁵² Տե՛ս՝ Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության 1985 թվականի մայիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 8225/78, կետ 57

խախտման դեպքում կարող է դիմել դատարան՝ ներկայացնելով վերջինիս վերականգնման կամ այլ պահանջներ, և նշված իրավունքը չի կարող անհիմն սահմանափակվել:

Տվյալ պարագայում, տուժողի իրավունքների պաշտպանությունը կատարվում է քրեական դատավարության շրջանակներում, որի ընթացքում քննվում է հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորությունը և նրա պատճառած վնասի հատուցման հարցերը: Մինչդեռ, ստացվում է, որ համաներման կիրառման դեպքում, չնայած նրան, որ տուժողն արդեն իսկ անցել է քրեական դատավարության տարբեր փուլերով, որի արդյունքում առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, ստիպված է լինում իր իրավունքների պաշտպանության համար կրկին անցնել դատական վարույթով:

Ավելին, Սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ

ՍԴՈ-787 որոշմամբ դատարանը նշել է, որ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը: Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված երաշխիքները պետք է ապահովվեն ոչ միայն այս կամ այն կոնկրետ հայցապահանջի քննության շրջանակում և համատեքստում, այլ նաև տվյալ խախտված իրավունքի վերականգնմանը միտված՝ տարաբնույթ փոխկապակցված հայցապահանջների քննության շրջանակում և համատեքստում, քանզի այդ հայցապահանջների վերջնական նպատակը մեկն է՝ միևնույն խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը: Հետևաբար, անձի միևնույն խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված փոխկապակցված հայցապահանջների դիտարկումը՝ որպես միմյանցից տարանջատված առանձին և ինքնուրույն գործերի հարուցման հիմքեր, կարող է հանգեցնել անձի գործի արդյունավետ, ամբողջական և բազմակողմանի քննության ապահովման դատավարական երաշխիքների խախտման (8-րդ կետ):

Եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ ներպետական իրավական համակարգը դիմողին հատկացնում է պաշտպանության միջոցներ,

ինչպիսին, օրինակ, քրեական վարույթի ընթացքում դիմողի կողմից քաղաքացիական հայց ներկայացնելն է, պետությունը պարտավոր է ապահովել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նրան տրամադրված հիմնարար երաշխիքները: Դիմողն ունի օրինական ակնկալիք, որ դատարանները փոխհատուցման պահանջի վերաբերյալ որոշում կկայացնեն՝ լինի դա նպաստավոր, թե՛ ոչ: Եվրոպական դատարանը նշել է, որ հետապնդման մարմինների կողմից գործի վարումը, որի արդյունքում լրացել է հանցագործության վաղեմության ժամկետները և հանգեցրել դիմողի փոխհատուցման պահանջի վերաբերյալ որոշման կայացման անհնարինությանը, դիմողին զրկում է դատարանի մատչելիության իրավունքից: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմողից չեն կարող պահանջել սպասել, որ անցնի դատական իշխանությունների մեղքով իր պահանջի վերաբերյալ վաղեմության ժամկետները և դրանից հետո փոխհատուցում ստանալու համար պահանջել դիմել քաղաքացիական դատարան, որն արդեն իսկ ներկայացվել է քրեական դատարանում⁵³:

Ավելին, հաշվի առնելով խնդրո առարկա օրենսդրական կարգավորումների անորոշությունը՝ խնդիրն ավելի վիճահարույց է դառնում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված՝ որոշակիության սկզբունքի տեսանկյունից, որի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: ՀՀ սահմանադրական դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՌ-1176 որոշմամբ արձանագրել է, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (6-րդ կետ):

Ավելին, 2016 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1270 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են

⁵³Տե՛ս՝ Անագնոստոպուլոսն ընդդեմ Հունաստանի 2003 թվականի հուլիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 54589/00, կետ 32

իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի (7-րդ կետ):

Եվրոպական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, արձանագրել է, որ օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, ինչը հնարավորություն կտա անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները⁵⁴: Ավելին, Եվրոպական դատարանն, անդրադառնալով օրինականության պահանջին, նշել է, որ վերջինս վերաբերում է ոչ միայն ներպետական օրենսդրությունում համապատասխան իրավական հենքի առկայությանը, այլև՝ «օրենքի որակին», որը պետք է լինի որոշակի, հետևանքները կանխատեսելի, ինչպես նաև հասանելի անձանց շրջանակին, որոնց վերաբերելի է, որպեսզի վերջիններս կարողանան կանխորոշել իրենց արարքների հետևանքները⁵⁵:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ կարգավորումները պետք է լինեն հստակ և զերծ լինեն տարակերպ մեկնաբանություններ տալու հնարավորություններից: Տվյալ պարագայում, Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասից պարզ չէ, թե համաներման կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ինչ կարգով պետք է լուծվի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը:

Տվյալ դեպքում, մասնավորապես, տուժողի համար կարող է հարց ծագել, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն վերջինիս կողմից ուղղված պատճառված վնասի հատուցմանը, եթե պատճառված վնասը հատուցելու հարցը լուծելու հետ կապված որևէ այլ իրավական կառուցակարգ, քան հայց հարուցելն է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը չի նախատեսում:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և 2-րդ հոդվածի 10-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին:

⁵⁴ Տե՛ս՝ Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

⁵⁵ Տե՛ս՝ Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 7136/75, 86-87 կետեր:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմող կողմը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով, վիճարկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին համապատասխանության հարցն այնքանով, որքանով սահմանված կարգավորումների պայմաններում գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, չի հանդիսանում մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք՝ վտանգելով անձի ազատության հիմնարար իրավունքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություններից մեկի՝ անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի պահպանմանը հետևելու տեսանկյունից բարձրացված հարցի կարևորության հաշվառմամբ՝ Պաշտպանի կողմից ներկայացվում է Սահմանադրական դատարանում քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

Դիրքորոշումը, մասնավորապես, արտահայտում է ինչպես Պաշտպանի գործունեության արդյունքները, այնպես էլ խնդրո առարկա իրավակարգավորման վերլուծությունը՝ միջազգային իրավական և սահմանադրաիրավական երաշխիքների համատեքստում:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի սահմանադրականությունը Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում վիճարկվում է այն առումով, որ գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի սահմանափակ կիրառությունը չի ապահովում անձի անձնական ազատության իրավունքի երաշխավորումը:

Դրույթի վիճարկման հիմքում ընկած է այն փաստարկը, որ ի տարբերություն կալանքի կիրառության հիմքերի՝ գրավի կիրառությունը պայմանավորվում է միայն մեկ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:

Կարծում ենք, որ անձի անձնական ազատության իրավունքի երաշխավորման տեսանկյունից վիճարկվող դրույթի սահմանադրականությունը պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ իրավական հարցադրումների շրջանակներում՝

1. արդյոք գործող քրեադատավարական օրենսդրությունը, ընդհանուր առմամբ. նախատեսում է այլընտրանքային խափանման միջոցների ճկուն համակարգ, ինչը հնարավորություն կտա նվազագույնի հասցնելու կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառությունը,

2. արդյոք անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը ներառում է նաև որպես կալանքին այլընտրանք՝ առավել մեղմ հարկադրանքի միջոցների կիրառության հնարավորությունը:

Առաջինի հետ կապված՝ հարկ է նկատել, որ քրեական գործով վարույթի ընթացքում կալանքի կիրառության մտահոգիչ պրակտիկան Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիտարկվել է՝ հենց կալանքի կիրառության քանակական ցուցանիշների, ինչպես նաև քրեադատավարական օրենքով ամրագրված՝ կալանքի հնարավորինս սահմանափակ կիրառությունն ապահովող կառուցակարգերի արդյունավետության տեսանկյունից:

Մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ արձանագրված է, որ «մտահոգիչ են գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ցածր ցուցանիշները: Այսպես, կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների մասնակի կամ ամբողջությամբ բավարարման դեպքերի և անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում: Բացի այդ, որոշակի բացասական միտում է նկատվում գրավ կիրառելու միջնորդությունների և դրանք բավարարելու կամ մասնակի բավարարելու հարաբերակցության հարցում: Այսպես, եթե 2011 թվականին գրավի կիրառումը բավարարվել է (այդ թվում՝ մասնակի) 131

դեպքում՝ կազմելով միջնորդությունների ընդհանուր թվի 29.2%, 2012 թվականին՝ 134 դեպքում՝ միջնորդությունների ընդհանուր թվի 30.3%, 2016 թվականին՝ 161 դեպքով՝ միջնորդությունների ընդհանուր թվի 20.9%, ապա 2017 թվականին և՛ նվազել է բավարարված միջնորդությունների քանակը՝ 125 միջնորդություն, և՛ դրանց տեսակարար կշիռը նվազել է մինչև 15.9%»⁵⁶:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ միջնորդությունների բավարարման բարձր շեմը, ինչպես նաև եվրոպական միջին (որոնք ևս գնահատվել են իբրև մտահոգիչ) ցուցանիշների գերազանցումը վկայում է **դատարանների կողմից կալանքի կիրառության դեպքում «ազատության կանխավարկածով» առաջնորդվելու և կալանքը բացառիկ դեպքերում, այսինքն՝ որպես «վերջին միջոց» կիրառելու սկզբունքների դեռևս ոչ բավարար կենսագործման մասին:**

Միևնույն ժամանակ, կալանքի կիրառության հարցում դատական պրակտիկայի բարելավման առարկայական և շոշափելի արդյունքների արձանագրումը պետք է ապահովվի հենց *կալանքի կիրառման հարցը որոշող դատական մարմնի կողմից անձի անձնական ազատությանը միջամտությունն արդարացնող ապացուցողական բարձր շեմի պահպանման* դեպքում, ինչն իր հերթին պայմանավորում է *հայեցակարգային օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը*: Գործող օրենսդրական կանոնակարգումներն այդ առումով բավարար ճկուն չեն: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է *այլընտրանքային խափանման միջոցների գործուն համակարգի, մեղադրյալի պարզաճ վարքագիծն ապահովելու նպատակով այդպիսի այլընտրանքային միջոցների կիրառման առաջնահերթության ուղղակի պահանջի բացակայությանը*:

Վերը շարադրվածը նշանակում է նաև, որ հատկապես դատական համակարգում անհրաժեշտ են սկզբունքային բնույթի փոփոխություններ, որոնք պետք է ունենան շարունակական բնույթ և լինեն հետևողական: Խոսքը վերաբերում է ինչպես օրենսդրական փոփոխություններին, այնպես էլ իրավակիրառ պրակտիկային: Իհարկե, ներկայում գործող պրակտիկայի պայմաններում օրենսդրական փոփոխություններն առավել քան պահանջված են,

⁵⁶ 2017 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf>

քանի որ կարող են ուղղակի ազդեցություն ունենալ իրավակիրառ պրակտիկայի վրա: Խոսքը նախևառաջ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմանը: *Օրենսդրորեն կալանքի իրավաչափության գլխավոր պայմաններից պետք է համարվի դրա կիրառությունը բացառապես այն դեպքում, երբ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցներով հնարավոր չէ ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձի պատշաճ վարքագիծը:*

Գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքի կիրառության պրակտիկան դիտարկվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի գործունեության արդյունքների ամփոփման շրջանակներում: Տարեկան հաղորդմամբ, մասնավորապես արձանագրվել է, որ *այդ տարում անձին կալանքից գրավով ազատելու դեպքերը կազմել են շուրջ 11%⁵⁷: Այսինքն 1/10-ի հարաբերակցությամբ է միայն, որ գրավի կիրառությունը համարվում է հնարավոր անձի պատշաճ վարքագծի ապահովման տեսանկյունից, և սա այն պարագայում, որ անձը մինչև դատարանի կողմից նրա մեղավորության վերաբերյալ վերջնական, օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը համարվում է անմեղ:*

Անդրադառնալով անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ հարկ է նկատել, որ անձի անձնական ազատության իրավունքի սահմանադրական հիմքերն ամրագրված են ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածում, որն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»:

Անձի անձնական ազատության իրավունքի՝ իբրև Սահմանադրությամբ հռչակված հիմնական իրավունքի ապահովմանն ուղղված Սահմանադրության 27-րդ հոդվածի իրավական բովանդակությունը պետք է բացահայտվի՝ որպես ելակետ ընդունելով միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթները և դրա մեկնաբանությունները Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում:

57

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf>

Այս առումով, ելակետային է 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության կարգավորումներով որդեգրված այն սկզբունքը, որով անձի հիմնական իրավունքները և ազատություններն իրենց սահմանադրական ամրագրումը և բովանդակային բացահայտումը պիտի ստանան՝ հիմք ընդունելով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային իրավաբանությունը և իրավական զարգացումները: Այս հայեցակարգային մոտեցումն իր առարկայացումն է ստացել նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի կարգավորումներում՝ առաջին հերթին «ազատությունից զրկման» գաղափարի՝ միջազգային իրավական մոտեցումներին համահունչ բովանդակային ընդգրկման և համապատասխանաբար իրավական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Ասվածն առավել հիմնավորվում է այն բանի հաշվառմամբ, որ Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները ոչ միայն համահունչ են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին, այլև, ըստ էության, գրեթե նույնությամբ կրկնում են դրանք: Թերևս բացառություն է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունը, որի համաձայն՝

«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:»:

Փոխարենը, ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ.

«Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:»:

Այս առումով, հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով «Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու

երաշխիքներով» պայմանն արդյոք ենթադրում է, որ անձնական ազատությունից զրկմանն այլընտրանքը սահմանափակվում է միայն դատաքննությանը ներկայանալու դեպքերով: Բացի այդ, ելակետային է այն հարցի դիտարկումը, թե անձի անձնական ազատության իրավունքն ամրագրող հոդվածի՝ որպես ազատությունից զրկելու կամայական դրսևորումներից պաշտպանող դրույթի երաշխիքային բովանդակության շրջանակներում արդյոք պետք է ներառվի նաև այլընտրանքային միջոցների կիրառության հնարավորությունը:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է դատական կայուն պրակտիկա մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցների վերաբերյալ: Այսպես, Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, ամրագրելով ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք, սակայն, դատական իշխանություններին չի ընձեռում ընտրության հնարավորության կա՛մ ողջամիտ ժամկետում անձին դատաքննության կանչել, կա՛մ վերջինիս ազատ արձակել՝ անգամ երաշխիքների պահպանմամբ: Մինչ դատապարտումը անձը համարվում է անմեղ, և 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակն է, ըստ էության, պահանջել անձի նախնական ազատումն այն պահից, երբ շարունակական կալանքը դադարում է ողջամիտ լինելուց:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման հարց քննարկելիս Դատարանը դիտարկում է, թե որքանով է պետությունը կատարել այլընտրանքային միջոցների կիրառության պարտականությունը: Ավելին, *կոնվենցիոն այս դրույթի պահանջների խախտում է ճանաչվել բոլոր այն դեպքերում, երբ պետությունը ձախողել է հիմնավորել, թե այլընտրանքային միջոցները, ինչպիսին, օրինակ, գրավը կամ ոստիկանական հսկողությունը, չէին կարող ապահովել դատարան անձի ներկայանալը կամ քննության պատշաճ ընթացքը, կամ չի վկայակոչվել որևէ փաստարկ, որը կվկայեր փախուստի, թաքնվելու կամ այլ կերպ քննությանը խոչընդոտելու վրանգի մասին*⁵⁸:

Այսպես, «Լեյիեվրն ընդդեմ Բելգիայի» գործում անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին՝ Դատարանը նշել է, որ «վերոգրյալ դրույթը խախտվել է, քանի որ չնայած դիմումատուին նախնական կալանքի

⁵⁸ Յաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի (Jablonski v. Poland) գործով 2000թ. դեկտեմբերի 21-ի վճիռը, զանգատ թիվ 33492/96, կետեր 82-83:

փոխարինման համար առաջարկել էր բազմաթիվ այլընտրանքային խափանման միջոցներ (ներառյալ էլեկտրոնային հսկողությունը՝ պարբերաբար ոստիկանություն ներկայանալու պայմանով), իշխանություններն, այնուամենայնիվ, չէին պատասխանել դրանց և նաև չէին պատճառաբանել, թե ինչու չեն կիրառվում կալանքին փոխարինող այլընտրանքային խափանման միջոցներ»⁵⁹:

«Ալպայն ընդդեմ Թուրքիայի» գործով Դատարանն արձանագրել է, որ «կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը»⁶⁰:

«Կաբալեռոն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով ևս Դատարանը գտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ այն պատճառով, որ «ներպետական օրենսդրությունը ինքնաբերաբար մերժում է գրավի (որպես այլընտրանքային խափանման միջոց) կիրառման հնարավորությունը որոշակի ծանր հանցանքների կատարման դեպքում: Դատարանը չի ունեցել հնարավորություն պարոն Կաբալեռոնին գրավով ազատ արձակելու. եթե դատարանն ունի նման սահմանափակում, ապա խախտվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը»⁶¹:

Այս մոտեցումը վերահաստատվել է «Փիրուզյանն չայաստանի» գործով՝ «կասկածյալին կալանավորելու կամ ազատ արձակելու որոշում կայացնելիս իշխանությունները պարտավոր են այլընտրանքային միջոցներ նախատեսել դատաքննությանը նրա մասնակցության ապահովման համար: Դատարանը նախկինում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ է հայտնաբերել մի շարք գործերով, որոնցում գրավ կիրառելու միջնորդությունը ինքնաբերաբար մերժվել է ներպետական օրենսդրության ուժով: Սույն գործով Դիմումատուի պահանջները մերժվել են այն հիմքով, որ Քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետը բացառում է ծանր կամ

⁵⁹ Լելիեվրն ընդդեմ Բելգիայի (Lelievre v. Belgium) գործով 2007թ.նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 11287/03, կետ 66:

⁶⁰ Սահին Ալպայն ընդդեմ Թուրքիայի (Sahin Alpay v. Turkey) գործով 2018թ.մարտի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, կետ 181:

⁶¹ Կաբալեռով ընդդեմ Միացյալ Թագավորության (Caballero v. The United Kingdom) գործով 2000թ. փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 32819/96, կետեր 18, 34:

առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում գրավով ազատելը: *Դիմումատուի գրավի կիրառման վերաբերյալ միջնորդության այդպիսի ինքնաբերաբար մերժումը, առանց նրա կալանքի կոնկրետ հանգամանքների դատական հսկողության, չի համապատասխանում 5-րդ հոդվածի 3-րդ կետի երաշխիքներին:*»⁶²:

Անդրադառնալով «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետին՝ Մարդու իրավունքների հանձնաժողովը նշել է՝ «նախնական կալանքը պետք է լինի բացառություն և պետք է կիրառվի գրավ, բացի այն դեպքերից երբ առկա է հավանականություն, որ մեղադրյալը կարող է խուսափել քննությունից, **վերացնել ապացույցները կամ ազդեցություն ունենալ վկաների վրա (...)**»⁶³:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության՝ քրեական արդարադատության չափանիշներում ևս նշվում է, որ նախնական կալանքին այլընտրանքը կարող է կիրառվել ինչպես *անհրաժեշտության դեպքում դատարան ներկայանալու*, այնպես էլ *արդարադատության իրականացմանը չմիջամտելու նպատակով*⁶⁴:

Այսպիսով, միջազգային դատական պրակտիկան և իրավաբանությունը փաստում են, որ.

1. Կալանքը՝ որպես խափանման միջոց, ենթադրաբար հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն որպես բացառիկ և վերջին միջոց (last resort), երբ մնացած բոլոր խափանման միջոցները, այդ թվում՝ գրավը, չեն կարող ապահովել հետապնդվող նպատակների իրագործումը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ անձնական ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, և պետությունն ունի պարտականություն՝ զերծ մնալու այդ իրավունքի անհարկի սահմանափակման յուրաքանչյուր դեպքից:

⁶² Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով 2012թ. հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, կետեր 103-104:

⁶³http://hrlibrary.umn.edu/monitoring/adminchap5.html?fbclid=IwAR3QGDAqCL8INHLMURkDHIKAC Oy_2jtnwgggiwgFrhfnHprZXB93EvmslkSY#167

⁶⁴https://www.ilsa.org/lessup/lessup16/Batch%201/handbook_of_international_standards_on_pretrial_detention_procedure_2010_eng.authcheckdam.pdf?fbclid=IwAR2uu8jiOPMu6W6UZuVNgdJHxZhzkL1k-yejGikOJhSGg5tghna9sICsM

2. Գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը չի կարող պայմանավորված լինել նույնիսկ ենթադրաբար կատարված հանցանքի ծանրության աստիճանից, այսինքն՝ ամեն կոնկրետ դեպքում դատարանը պետք է ունենա լայն հայեցողություն, որոշելու՝ թե արդյոք գրավը արդյունավետ միջոց է հետապնդվող նպատակներն իրագործելու նպատակով: Դատարանը չի կարող օրենսդրորեն կաշկանդված լինել այս հարցում:

3. Միջազգային իրավաբանությամբ գրավը դիտարկվում է ոչ միայն որպես դատարանի առջև ներկայանալու և քննությունից չխուսափելու, այլ նաև **արդարադատության իրականացմանը չմիջամտելու, այսինքն՝ քննությանը չխոչընդոտելու երաշխիք:**

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի փաստակազմի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը որպես գրավի կիրառման միակ պայման է դիտարկում քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը: Փաստորեն, բոլոր այն դեպքերում, երբ դատարանը եզրահանգի, որ գրավը կարող է լինել ենթադրաբար հանցանք կատարած անձի կողմից քրեական գործի վարույթը չխոչընդոտելու գործուն երաշխիք, այսինքն՝ գրավի կիրառմամբ կարելի է անձին զերծ պահել քննությանը խոչընդոտելուց, այնուամենայնիվ, կաշկանդված լինելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ, չի կարող կիրառել գրավ, և փաստորեն անձը պետք է մնա կալանքի տակ՝ ազատությունից կամայական զրկվածի կարգավիճակում:

Սա է պատճառը, որ ինչպես ներկայացված է ՀՀ վճռաբեկ դատարանի ՀՀ սահմանադրական դատարան դիմելու որոշմամբ, դատարանների մի մասը նմանատիպ դեպքերում կիրառում է կալանքը՝ որպես խափանման միջոց՝ անձի անձնական ազատության իրավունքի՝ ձևական առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տառին համապատասխան, բայց ոչ իրավաչափ սահմանափակմամբ: Թերևս օրենսդրական կարգավորմամբ է որոշակիորեն պայմանավորված, որ գրավը՝ որպես կալանքի այլընտրանքային խափանման միջոց, կիրառվում է ոչ թե իբրև օրինաչափություն, այլ բացառիկ դեպքերում:

Այսպիսով, անձի անձնական ազատության երաշխավորման միջազգային պրակտիկայի, սահմանադրաիրավական երաշխիքների և գործող օրենսդրական կարգավորումների համադրումից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասն այնպիսի իրավամեկնաբանման և իրավակիրառման պայմաններում, որ գրավի ընտրությունը սահմանափակվում է միայն վարույթն իրականացնող մարմնին ներկայանալն ապահովելու նպատակով, կարող է վերանգել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական ազատության հիմնարար իրավունքը:

5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու համար, նաև հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁶⁵ 414.2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում: Վարույթ ընդունելու պարագայում կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու մասով օրենսդրորեն սահմանված չեն հստակ դատավարական ժամկետներ: Մինչդեռ, Օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանը ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերը ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

⁶⁵ Այսուհետ՝ Օրենսգիրք

Ներկայացված իրավակարգավորումների համադիր վերլուծությամբ կարող ենք փաստել, որ վերաքննիչ դատարանի պարագայում օրենսդրորեն սահմանված է կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու հստակ ժամկետ: Նշված դատավարական ինստիտուտը ներդրվել է՝ հաշվի առնելով, որ դատարանի կողմից քննության առարկա է անձի հիմնական իրավունքի սահմանափակման հարցը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Բնականաբար այս իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման: Սակայն դրա սահմանափակման պարագայում պետք է գործեն ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված երաշխիքները: Մասնավորապես, նույն 27-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Ավելին, նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի **վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում**

որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման համար կարճ ժամկետ սահմանելը պայմանավորված է մարդու ազատության իրավունքի անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամկետում վերացնելու՝ օրենսդրի մտադրությամբ⁶⁶: Մինչդեռ, վճռաբեկ դատարանի պարագայում օրենսդրական նման կարգավորումներ սահմանված չեն, և վարույթ ընդունելու դեպքում ողջամիտ ժամկետների պահպանման հարցը թողնվում է վճռաբեկ դատարանի հայեցողությանը:

Ներկայացված իրավիճակը հարկ է քննարկել մարդու մի շարք հիմնական իրավունքների իրացման հնարավորության լույսի ներքո:

Այսպես, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են դատական պաշտպանության, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու և արդար դատաքննության իրավունքները: Բնականաբար, մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, մի շարք հիմնական տարրերից զատ, ներառում է նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը: Այս իրավունքների լիարժեք իրացման կարևորությունն ընդգծել է նաև Սահմանադրական դատարանը՝ հստակ սահմանելով բողոքարկման ինստիտուտի արդյունավետ գործելու համար օրենսդրական կարգավորումների առկայության անհրաժեշտությունը:

Այսպես, 2008 թվականի ապրիլի 22-ի ՍԴՈ-752 որոշմամբ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, **ինչպես նաև դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք**, որն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 հոդվածում: Ըստ դատարանի՝ դատավարական ժամկետների ինստիտուտն ընդհանրապես կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների դատական

⁶⁶ Տես՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2005 – էջ 489:

պաշտպանության սահմանադրական վերոհիշյալ իրավունքի արդյունավետ իրացումը: Դատարանը փաստել է, որ **այն օրենքով կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը և գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (պարտավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ: Միաժամանակ, որոշակի ժամկետով այդպիսի գործողությունների կատարման սահմանափակումը դատավարական հարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, հստակությունը, դատավարական սկզբունքների պահպանումը, գործով բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը, ի վերջո, արդարադատության արդյունավետությունն ապահովող և անձանց խախտված իրավունքները ողջամիտ ժամկետում վերականգնելու կարևոր երաշխիք է:**

Գործի քննության «ողջամիտ ժամկետ» հասկացության բովանդակության բացահայտմանն է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նախադեպերից մեկով նշելով, որ «Դատարանն իրազեկ է այն դժվարությունների մասին, որոնք երբեմն դանդաղեցնում են (...) վեճերի քննությունը (...): Բայց և այնպես, 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գործերը պետք է քննվեն ողջամիտ ժամկետում. **Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը:**»⁶⁷:

Ողջամիտ ժամկետներն, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի, հաշվարկվում են՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը և հետապնդած շահը, դատական և պետական իշխանության մարմինների վարքագիծը⁶⁸:

Վերը նշվածի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Զիմերմանը և Սթեիներն ընդդեմ Շվեյցարիայի գործով հայտնել է դիրքորոշում առ այն, որ պետությունները պարտավոր են ստեղծել այնպիսի իրավական համակարգ, որպեսզի դատարանները համապատասխանեն Մարդու

⁶⁷ Տես Հ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (H. c. France) գործով 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10073/82, կետ 58:

⁶⁸ Տե՛ս Բուխհոլզն ընդդեմ Գերմանիա Դաշնային Հանրապետության (Buchholz v. the Federal Republic of Germany) գործով 1981 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7759/77, կետ 49:

իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (Արդար դատաքննության իրավունք) պահանջներին, ներառյալ՝ ողջամիտ ժամկետում դատաքննությունը⁶⁹:

Իհարկե, պետք է նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով թեև չի սահմանվում բողոքարկման իրավունքը, սակայն Եվրոպական դատարանը նշել է, որ եթե պետությունները ներպետական օրենսդրությամբ սահմանում են բողոքարկման իրավական հնարավորություն, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքները նույնությամբ տարածվում են այդ գործընթացների վրա ևս⁷⁰: Այսինքն, ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքն ամբողջությամբ կիրառելի է նաև բողոքարկման պարագայում:

Ելնելով վերոգրյալից՝ պետք է փաստել, որ Վճռաբեկ դատարանում կալանքի վերաբերյալ որոշումների կայացման համար Օրենսգրքում հստակ ժամկետների բացակայությունը կարող է առաջ բերել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով ողջամիտ ժամկետների պահպանման հարց:

Գործի ողջամիտ ժամկետում քննության վերաբերյալ դրույթի նպատակը նախ և առաջ այնպիսի երաշխիքի սահմանումն է, որով անձը կկարողանա իմանալ իրեն հուզող հարցի հանգուցալուծման հնարավոր ժամկետները: Սակայն ստեղծված իրավիճակում, կալանավորման վերաբերյալ որոշման կայացման ժամկետների սահմանման բացակայության պարագայում, իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերը հնարավորություն չեն ունենում անգամ մոտավորապես կանխատեսել որոշումը կայացնելու ժամկետներ և ըստ այդմ՝ ի վիճակի չեն լինում դրսևորել համապատասխան վարքագիծ: Այսպիսով, բացի այն, որ գործ ունենք մարդու անձնական ազատության իրավունքի հետ, իրավական որոշակիության տեսանկյունից ևս ստեղծվում է խնդրահարույց իրավիճակ:

Ներկայացված խնդիրն անհրաժեշտ է քննարկել նաև արդար դատաքննության իրավունքի և մարդու անձնական ազատության համադիր լույսի ներքո: Հարկ է նկատել, որ քրեական գործերով, կալանքի տակ գտնվող անձը գործի քննության ձգձգումների, ողջամիտ ժամկետների խախտման

⁶⁹ Զիմերմանը և Սթեյներն Շվեյցարիայի (Zimmermann and Steiner v. Switzerland) գործով 1983 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 8737/79, կետ 29:

⁷⁰ Դելքուրն ընդդեմ Բելգիայի (Delcourt v. Belgium) 1970 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25:

արդյունքում շարունակում է մնալ անազատության մեջ: Արդյունքում, հնարավոր են դեպքեր, երբ անձը անազատության մեջ մնա երկու ամիս, անգամ կալանքի ժամկետի չերկարաձգման կամ այլ հիմքով ազատ արձակվի և կալանքի վերաբերյալ որոշումը կայացվի այդ ժամանակ միայն: Ժամկետների սահմանված չլինելու և ըստ այդմ կամ առհասարակ դիմումը ստանալուց հետո ողջամիտ ժամկետում գործը չքննելու պարագայում խնդիրներ կարող են առաջանալ մարդու անձնական ազատության տեսանկյունից:

Այսպես, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է: Ստացվում է, որ նշված կարգավորմամբ սահմանվում է ինչպես ազատությունից զրկված անձի՝ կալանավորման օրինականությունը վիճարկելու հնարավորություն, այնպես էլ սահմանվում է, որ դատարանը վերջինի վերաբերյալ որոշում կայացնում է անհապաղ:

Նշված խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ մասնավորապես նշելով, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը կալանքի տակ գտնվող անձանց իրավունք է վերապահում վիճարկել անազատության մեջ գտնվելու իրավաչափությունը՝ հոչակելով, որ կալանքի օրինականության վերաբերյալ դատական որոշումը պետք է ընդունվի անհապաղ, և դրա անօրինական լինելու պարագայում անձը դադարի գտնվել անազատության մեջ⁷¹: Ազատությունից զրկված անձի կալանավորման որոշումը վերանայելու անկյունաքարային երաշխիքին անդրադարձ է կատարվել նաև Ռակկիչն ընդդեմ Ռուսաստանի⁷², Մուսիալն ընդդեմ Լեհաստանի⁷³ գործերով: Կալանքի օրինականության վիճարկման անհապաղ քննության և որոշում կայացնելու վերաբերյալ դիրքորոշումներ Եվրոպական դատարանն ամրագրել է

⁷¹ Մուրենն ընդդեմ Գերմանիայի (Mooren v. Germany [GC]) գործով 2009 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 11364/03, կետ 106:

⁷² Ռակկիչն ընդդեմ Ռուսաստանի (Rakevich v. Russia) գործով 2003 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 58973/00, կետ 43

⁷³ Մուսիալն ընդդեմ Լեհաստանի (Musial v. Poland) գործով 1995 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 24557/94, կետ 43

Իլնսեհերն ընդդեմ Գերմանիայի⁷⁴, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի⁷⁵, Խալիֆան և այլք ընդդեմ Իտալիայի⁷⁶ և այլ գործերով:

Ավելին, Եվրոպական դատարանը հստակ ընդգծել է նաև, որ ազատությունից զրկման հետ կապված դատավարությունը պահանջում է հատուկ շտապողականություն⁷⁷, իսկ դրանից յուրաքանչյուր բացառության կամ շեղման պարագայում անհրաժեշտ է հստակ և խիստ մեկնաբանություն⁷⁸:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կարող ենք նշել, որ Վճռաբեկ դատարանում կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու մասով օրենսդրորեն հստակ դատավարական ժամկետների սահմանված չլինելը խնդրահարույց է և կարող է գործնականում առաջ բերել արդար դատաքննության և անձնական ազատության սահմանադրական իրավունքների չապահովման հարց:

6. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 105-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 69-րդ հոդվածի 1-ին մասով դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 105-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և 79-րդ հոդվածի համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

⁷⁴ Իլնսեհերն ընդդեմ Գերմանիայի (Ilseher v. Germany [GC]) գործով 2018 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 10211/12 27505/14, կետ 251:

⁷⁵ Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia [GC]) գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ [5826/03](#), կետ 154:

⁷⁶ Խալիֆան և այլք ընդդեմ Իտալիայի Khlaifia and Others v. Italy [GC] գործով 2016 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16483/12, կետ 131:

⁷⁷ Հաթչիսոն Ռեյդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Hutchison Reid v. the United Kingdom) գործով 2003 թվականի փետրվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ 50272/99, կետ 79:

⁷⁸ Լավրենտիադիսն ընդդեմ Հունաստանի (Lavrentiadis v. Greece) գործով 2015 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 29896/13, կետ 45:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի⁷⁹ 109-րդ հոդվածը նախատեսում է աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը: Մասնավորապես, 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է գործատուի նախաձեռնությամբ, իսկ 9-րդ կետն աշխատանքի էական պայմանների փոփոխման դեպքում աշխատանքային պայմանագրի լուծումը:

Օրենսգրքի 105-րդ հոդվածը մանրամասն կարգավորում է աշխատանքի էական պայմանների փոփոխելու դեպքերը: Մասնավորապես, 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Միևնույն ժամանակ, ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ աշխատանքի էական պայմաններ են աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածը, որն ամրագրում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը, 1-ին մասի 2-րդ կետով նախատեսում է, որ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ *աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում*:

Արդյունքում, ստացվում է, որ աշխատանքային օրենսդրությամբ ամրագրվել է աշխատանքային պայմանագրի լուծման երկու ինստիտուտ՝ գործատուի նախաձեռնությամբ և աշխատանքի պայմանների էական փոփոխման դեպքերը: Մինչդեռ, այս երկու ինստիտուտի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ բնույթով դրանք կարող են նույնանալ:

⁷⁹ Այսուհետ՝ Օրենսգրքը

Միաժամանակ, Օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված էական պայմանների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ աշխատանքի էական պայմանների փոփոխությունը կարող է ևս տեղի ունենալ գործատուի նախաձեռնությամբ: Դրա մասին է վկայում նաև հոդվածի տառացի մեկնաբանությունը: Այսպես, արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում **թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները**: Այսինքն, նման դրույթի ձևակերպումը ինքնին գործատուին հնարավորություն է տալիս կայացնել նման որոշում:

Ներկայացված երկու ինստիտուտների էությունը հասկանալու նպատակով անհրաժեշտ է դիտարկել Օրենսգրքի 114-րդ հոդվածը, որն ամրագրում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն արգելելու երաշխիքներ: Մասնավորապես, ըստ 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

Վերոնշյալ կարգավորումների արդյունքում ստացվում է, որ Օրենսգրքի մակարդակով նախատեսվել են երաշխիքներ հղի կանանց և երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամող անձանց համար: Ընդ որում՝ պարզ է դառնում, որ անգամ եթե արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատում է տեղի ունենում, գործատուն չի կարող աշխատանքային պայմանագիրը լուծել իր նախաձեռնությամբ, մասնավորապես՝ հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման

օրվանից հետո մեկ ամիսը լրանալը կամ երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում:

Միևնույն ժամանակ, այն պարագայում, երբ օրենքի մեկնաբանության արդյունքում աշխատանքի էական պայմանների փոփոխելը չի դիտվում որպես գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում, **անգամ եթե դրանք էությամբ գործատուի նախաձեռնությամբ կատարվող փոփոխություններ են**, Օրենսգրքի 114-րդ հոդվածի երաշխիքները դադարում են գործել:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ պրակտիկայում նշյալ նորմերին տրվել է այնպիսի մեկնաբանություն, ինչը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից: Այս առումով, հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-984 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում:

Ըստ այդմ՝ սույն կարգավորումները պետք է դիտարկել Սահմանադրության մի շարք հոդվածների տեսանկյունից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով: Ընդ որում՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Միևնույն ժամանակ, Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և

մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Ըստ այդմ՝ Օրենսգրքով հղի կանանց և մինչև մեկ տարեկան երեխա խնամող անձանց համար նախատեսվում են արտոնություններ և երաշխիքներ, որոնք ինքնանպատակ չեն: Դրանք միտված են ապահովելու ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի պահանջները և ստեղծել իրական երաշխիքներ աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքային իրավունքների արդյունավետ իրացման համար:

Այսպես, Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով, 144-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հղի կանայք և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են արտաժամյա աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ, 155-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են հանգստյան օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ, 156-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:

Նշյալ արտոնությունները գործատուների համար կարող են «անցանկալի համարվել», ինչի պատճառով շատ հաճախ հղի կանայք կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող անձանց աշխատանքը կարող է վտանգվել: Այդ է պատճառը, որ Օրենսգիրքը նախատեսում է նաև երաշխիքներ գործատուների կողմից չարաշահումների հնարավոր դեպքերի կանխարգելման համար: Նշված խնդիրը անհամամասնորեն են ազդում հենց կանանց վրա, քանի որ Հայաստանում հիմնականում կանայք են զբաղվում մինչև մեկ տարեկան երեխաների խնամքով և հաճախ կարող է ունենալ խտրական դրսևորումներ կանանց նկատմամբ:

Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ աշխատանքի ընդունվելիս, թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ աշխատավայրում առաջխաղացման տեսանկյունից: Այսպես, օրինակ՝ աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունների և այդ թափուր հաստիքների համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է

տալիս, որ դրանք շատ հաճախ պարունակում են խտրական դրսևորումներ: Միաժամանակ, որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին (նման խնդիրը հատկապես նկատելի է երիտասարդ կանանց պարագայում, ում դեպքում գործատուները վախենում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից): Տվյալ խնդրի մասին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնում է տարեկան զեկույցներում և հաղորդմամբ:

Հայաստանը, վավերացնելով մի շարք միջազգային պայմանագրեր, հանձնառություն է վերցրել քայլեր ձեռնարկել կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Այսպես, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանվել է, որ Աշխատանքից ազատելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ճանաչել բոլոր աշխատողների իրավունքը, որ նրանց աշխատանքից ազատելու դեպքում չպետք է դադարի առանց *նման ազատման համար հիմնավորված պատճառների, որոնք կապված են նրանց ընդունակության կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա:*

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն՝ կանանց նկատմամբ խտրականության բացառման համար ձեռնարկվող քայլերից է մայրության հիման վրա աշխատանքից ազատելու բացառման ուղղված քայլերի ձեռնարկումը: Ավելին, **նույն հոդվածի 2-րդ մասը «ա» կետը նախատեսում է, որ** **ամուսնության կամ մայրության հիմքով կանանց նկատմամբ խտրականությունը կանխելու և աշխատանքի արդյունավետ իրավունք երաշխավորելու համար մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ պատժամիջոցների կիրառման սպառնալիքի ներքո արգելելու աշխատանքից ազատումը հղիության կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի հիման վրա, կամ աշխատանքից ազատելիս ամուսնական դրության հիմքով խտրականությունը:**

Մինչույն ժամանակ, Վերանայված սոցիալական խարտիայի 1-ին մասի համաձայն՝ աշխատող կանայք մայրության դեպքում հատուկ պաշտպանվածության իրավունք ունեն։ Ավելին, Խարտիայի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ ընտանեկան պարտականություններ ունեցող, ամուսնացող կամ ամուսնանալու ցանկություն ունեցող բոլոր աշխատող անձինք ունեն այդ ամենի իրավունքը առանց խտրականության սուբյեկտ դառնալու և, որքան հնարավոր է, առանց աշխատանքի և ընտանեկան պարտականությունների հակասության։ Խարտիայի 8-րդ հոդվածն ամրագրում է նաև աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը, որի 2-րդ մասի համաձայն՝ աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են *համարել անօրինական գործադուրի՝ կնոջը աշխատանքից ազատման ծանուցում տալը այն ժամանակաշրջանից սկսած, երբ կինը ծանուցում է իր գործադուրին իր հղիության մասին, մինչև նրա մայրությանը հատկացված արձակուրդի վերջը*, կամ՝ նրան աշխատանքից ազատման ծանուցում տալը այնպիսի ժամանակ, որ ծանուցման ժամկետը կվերջանա վերոնշյալ ժամանակաշրջանում։

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը 6-րդ հոդվածով ամրագրելով աշխատանքի իրավունքը՝ առանձին՝ 10-րդ հոդվածի 2-րդ մասով ևս սահմանում է, որ սույն դաշնագրին մասնակցող պետությունները ընդունում են, որ հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի մայրերին՝ *մինչև ծննդաբերությունը և դրանից հետո ընկած խելամիտ ժամանակաշրջանի ընթացքում*։

Միաժամանակ, պետք է նշել, որ այլ միջազգային փաստաթղթերում ևս սահմանվել են կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ։

Այսպես, Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքային պայմանագրի դադարեցման» վերաբերյալ թիվ C158 կոնվենցիայի⁸⁰ 9-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ Կոնվենցիայով նախատեսված մարմինները իրավասու են ուսումնասիրել աշխատանքային պայմանագրի դադարեցման պատճառները և գործին վերաբերող այլ հանգամանքները, որի արդյունքում պետք է որոշում կայացվի, թե արդյոք դադարեցումը եղել է հիմնավորված։ Ավելին, Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի

⁸⁰ https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C158

համաձայն՝ երբ գործատուն ներկայացնում է տնտեսական, տեխնոլոգիական, կառուցվածքային կամ համանման բնույթի պատճառաբանություններ, նա պարտավոր է համապատասխան աշխատողների ներկայացուցիչներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն, ներառյալ նախատեսվող դադարեցման պատճառների, այն աշխատողների թվաքանակի և կատեգորիաների մասին, որոնց վրա կարող է այն ազդեցություն ունենալ և այն ժամկետը, որի ընթացքում նախատեսվում է դադարեցումը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ C-183 կոնվենցիայի և թիվ 191 հանձնարարականի լույսի ներքո Կրծքով կերակրման գլոբալ դաշինքի «Աշխատավայրում մայրության պաշտպանության» վերաբերյալ զեկույցում⁸¹ նշվում է, որ աշխատավայրում մայրության պաշտպանության առումով գենդերային հավասարությունը նշանակում է հղիության և ընդհանրապես ամբողջ վերարտադրողական տարիքի ընթացքում պաշտպանական դրույթների նախատեսում բոլոր աշխատող կանանց համար, որն իր մեջ ներառում է առանձնահատուկ տարբերակված վերաբերմունք: Եթե կինը վերադառնում է ծննդաբերության արձակուրդից, ապա պետք է երաշխավորվի նրա իր նախկին աշխատանքին վերադառնալը: Օրենքները պետք է պաշտպանեն այն կանանց, ովքեր հղի են, ովքեր վերադառնում են ծննդաբերության արձակուրդից և/կամ կրծքով կերակրում են և ոչ միայն աշխատանքից ազատելու, այլ նաև ցածր պաշտոնի տեղափոխելու կամ աշխատանքի առաջխաղացման հնարավորությունները բացառելու դեպքերում:

Վերոնշյալ միջազգային փաստաթղթերը և ՀՀ օրենսդրության կարգավորումները վկայում են, որ պետությունը ընդունում է որոշակի խումբ անձանց՝ օրինակ՝ հղի կանանց և մինչև մեկ տարեկան երեխա խնամողների համար հատուկ արտոնությունների նախատեսումը, ինչպիսին է գործատուի նախաձեռնությամբ որոշակի դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծման արգելքը: Միևնույն ժամանակ, նման երաշխիքների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրավակիրառ պրակտիկայում ապահովել դրանց էության անխախտելիությունը և զուտ ձևական գործոնների հիմքով չսահմանափակեն երաշխիքների մատչելիությունը դրա իրական իրավունքն ունեցող անձանց համար:

⁸¹ <http://waba.org.my/pdf/MaternityProtectionattheWorkplace-final.pdf>

Դիմումում նշված օրինակի վերլուծությունը վկայում է, որ այն պարագայում, երբ աշխատանքի էական պայմանների փոփոխելը չի դիտվում որպես գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում, անգամ եթե դրանք էությամբ գործատուի նախաձեռնությամբ կատարվող փոփոխություններ են, Օրենսգրքի 114-րդ հոդվածի երաշխիքները դադարում են գործել: Ուստի, տվյալ իրավիճակում մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կինը օրենսդրական թերի կարգավորումների և դրանց տրված նեղ մեկնաբանման արդյունքում չի կարողանում օգտվել աշխատանքային օրենսդրությամբ իրեն վերապահված աշխատանքային պայմանագրի լուծումն արգելող երաշխիքներից: Արդյունքում խնդիր է առաջանում ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի հետ:

7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանության հարցը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը սահմանող իրավական կարգավորումների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով: Նշվածից բացառություն է սահմանված այն դեպքը, երբ Վճռաբեկ դատարանը գալիս է

եզրակացության առ այն, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Քննության՝ դատական նիստում իրականացնելու համար, սակայն, դատավարության կողմերը օժտված չեն օրենսդրական այնպիսի գործիքակազմով, որը հնարավորություն տա վերջիններիս նման խնդրանքով միջնորդություն ներկայացնել դատարան:

Ավելին, Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ անգամ դեպքերի որոշակի շրջանակ, որոնց առկայության պարագայում դատարանը դատական նիստի միջոցով իրականացնի այս կամ այն գործի քննությունը:

Անշուշտ, գործի գրավոր ընթացակարգի վերաբերյալ կարգավորումներ են առկա նաև Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգում և Սահմանադրական դատարանում գործի քննության պարագայում: Սակայն, ի տարբերություն Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգի՝ Վերաքննիչ դատարանում բացի դատարանի կողմից կայացվող որոշումը (եզրահանգումը), գործի բանավոր ընթացակարգով քննության հիմք կարող է հանդիսանալ նաև գործին մասնակցող անձի միջնորդությունը: Սահմանադրական դատարանի պարագայում ևս, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով և 72-րդ հոդվածի 5-րդ մասով հստակ նախատեսվում է գործի գրավոր քննությունից բացառություն այն պարագայում, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը:

Չնայած նշված վերջին դեպքում ևս Սահմանադրական դատարանն է որոշում անցում կատարել բանավոր ընթացակարգի, թե՛ ոչ, սակայն, ամեն դեպքում օրենսդրորեն սահմանված են դեպքեր, երբ այդպիսիք առկա լինելու պարագայում Սահմանադրական դատարանը քննարկում է բանավոր ընթացակարգի անցնելու անհրաժեշտությունը:

Արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից խնդրահարույց է նաև այն հարցը, որ փաստի վերաբերյալ քննություն իրականացնելիս Վճռաբեկ դատարանը գործը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ օրենսդրորեն ամրագրված պարտավորություն չունի: Արդյունքում՝ ստացվում է

իրավիճակ, որ վերը նշված պարագայում դատաքննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու պարագայում կողմը զրկված է լինելու իր կարծիքն ու դիրքորոշումը հայտնել այս կամ այն փաստի կապակցությամբ:

Ուստի վերոնշյալ խնդիրներն անհրաժեշտ է դիտել արդար դատաքննության հիմնական իրավունքի իրացման տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Այսպես, անդրադառնալով այս իրավունքին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1020 որոշմամբ ուղղահայացներ է անցկացրել հրապարակային դատաքննության և գործերի քննության գրավոր և բանավոր ընթացակարգերի մասին:

Սահմանադրական դատարանը նշել է, որ դատարանի իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են՝ հրապարակային դատաքննությունը (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև դատական ակտի պարտադիր հրապարակումը:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ դատաքննության գրավոր ընթացակարգի և դատաքննության հրապարակայնության սկզբունքների «կարծեցյալ բախումը» հատկապես ակներև է այն դեպքում, երբ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում (գործող 63-րդ հոդված) նախատեսված հրապարակային քննության երաշխիքի համատեքստում բանավորության սկզբունքը բացառող ցանկացած իրավադրույթ միայն առերևույթ կարող է վիճահարույց թվալ: Սակայն, դատաքննության գրավոր ընթացակարգի

կիրառումն արդարադատության հիմնարար սկզբունքների իրականացման երաշխիքների խախտում չի կարող դիտվել՝ կողմերի համաձայնությամբ այն իրականացվելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ անհրաժեշտ չէ լսել փորձագետին, հարցաքննել վկաներին, կատարել զննում, տալ դատական հանձնարարություններ: Մյուս կողմից՝ գրավոր քննությունը բացառվում է, երբ բանավոր քննություն անցկացնելու վերաբերյալ առկա են օրենքով հստակ նախատեսված պարտադիր հանգամանքներ: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ գրավոր ընթացակարգով դատաքննությունը, 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, չի կարող մեկնաբանվել որպես ոչ հրապարակային սկզբունքով արդարադատության իրականացում, առավել ևս՝ մեկնաբանվել որպես 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ պայմանների անտեսման միջոց, *եթե այն իրականացվում է հստակ սահմանված ընթացակարգով՝ երաշխավորելով դատաքննության մասնակիցների իրավունքների արդյունավետ իրացումը*:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք գործերով հայտնել է դիրքորոշում առ այն, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածն իր մեջ ներառում է գործի քննության բանավոր ընթացակարգը (oral hearing) և այն կհամապատասխանի նշված հոդվածի պահանջներին, երբ դատարանը քննի իրավունքի վերաբերյալ հարց⁸²: Ավելին, Եվրոպական դատարանն իր մի շարք գործերով նշել է, որ այն պարագայում, երբ դատարանը քննում է փաստի վերաբերյալ հարց և անհրաժեշտ է լսել դատաքննության կողմի դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ, ապա դատաքննությունն անհրաժեշտ է իրականացնել բանավոր ընթացակարգով⁸³:

⁸² Տե՛ս Միլլերն Շվեդիայի (Miller v. Sweden) գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 55853/00, կետ 30:

⁸³ Տե՛ս Ֆիշերն Ավստրիայի (Fischer v. Austria) գործով 2001 թվականի օգոստոսի 29-ի վճիռը , գանգատ թիվ 37950/97, կետ 44; Մալիհուսն Չեխիայի (Malhous v. the Czech Republic [GC]) գործով 2001 թվականի հուլիսի 21-ի վճիռը, գանգատ թիվ 33071/96, կետ 60: Տե՛ս Միլլերն Շվեդիայի (Miller v. Sweden) գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 55853/00, կետ 34:

Սահմանադրական դատարանի վերը նշված որոշմամբ, արձանագրվել է, որ դատաքննության գրավոր, ինչպես և բանավոր ընթացակարգերն արդարադատության իրականացման կազմակերպական-ընթացակարգային ձևեր են, որոնք իրավական ամրագրմամբ ներդրվելով արդարադատական պրակտիկայում՝ կոչված են. մի դեպքում՝ առանց «բանավոր լուսմների» դատաքննական գործողությունների իրականացման, մյուս դեպքում՝ դրանց կատարմամբ ապահովելու դատական գործերի արդար, արդյունավետ և հրապարակային քննություն, դատական ակտերի կայացում և դրանց հրապարակում:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ գործի քննության բանավոր և գրավոր ընթացակարգերը բխում են արդար դատաքննության իրավունքի էությունից և համատեղելի են վերջինիս կանոնների հետ: Սակայն, պետք է նշել նաև, որ օրենսդրորեն պետք է սահմանված լինեն այնպիսի երաշխիքներ, որոնք բացառեն դատավարության մասնակիցների իրավունքի իրացման ամենաչնչին խոչընդոտի հնարավորությունն անգամ:

Ուստի, կարծում ենք, որ գործի մասնակցի՝ Վճռաբեկ դատարանում գործի բանավոր ընթացակարգի անցկացման համար միջնորդություն ներկայացնելու իրավունքի բացակայությունը և, միևնույն ժամանակ, թե՛ Վերաքննիչ, թե՛ Վճռաբեկ դատարանների պարագայում այն դեպքերի հստակ սահմանման բացակայությունը, որի դեպքում դատարան պետք է գործը քննի բանավոր ընթացակարգով, գործնականում հանգեցնում են արդար դատաքննության իրավունքի իրացման խոչընդոտների:

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմողը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-ին մասի և 35-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ, 63-րդ և 66-րդ հոդվածների

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ նաև հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում կատարված վերլուծությունը

Հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակի շրջանակները՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա սույն դիմումի վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշման շրջանակներում անդրադարձ է կատարվում ոչ թե Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանն ու դրա կիրառության շրջանակներին, այլ որքանով է այդ ինստիտուտն առնչվում անձի անձնական ազատության իրավունքին միջամտության՝ նախնական կալանքի իրավաչափության պայմաններին: Այլ կերպ ասած, բարձրացրած իրավական խնդիրը թերևս վերաբերում է նրան, թե Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի դիտարկումը՝ հանցանքի կատարման «հիմնավոր կասկածի» չափանիշի գնահատման շրջանակներում ինչպես է առնչվում անձի անձնական ազատության սահմանափակման սահմանադրաիրավական երաշխիքներին:

Խնդրի դիտարկումը անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի համատեքստում իրականացվել է ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության ուսումնասիրության արդյունքներով:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁸⁴ 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները:

Հոդվածով նշված հանգամանքների առկայությունը հիմք է ինչպես դատախազի և քննիչի համար մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս, այնպես էլ դատարանի համար, որը լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը: Նշվածի հաշվառմամբ կարող ենք փաստել, որ օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված կարգավորումն ուրույն ցուցիչ է նաև թե՛

⁸⁴ Այսուհետ՝ օրենսգիրք

մինչդատական վարույթի, թե՛ դատաքննության փուլում գործի հետագա ճակատագրի վերաբերյալ: Վերջինիս հաշվառմամբ՝ հարկ է նշել, որ քննիչի կամ դատախազի կողմից քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու պարագայում դադարեցվում է քրեական դատավարությունն ամբողջությամբ:

Ներկայացվածի համադրության արդյունքում կարող ենք փաստել, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների ամրագրումը կարևոր է այնքանով, որ դրանց հաշվառմամբ՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման:

Քրեադատավարական օրենքի վիճարկվող և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ թերևս քննարկման առարկա խնդիրը ոչ այնքան կալանքի կիրառության՝ օրենքով սահմանված կարգի կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թերի կանոնակարգումներին է վերաբերում, այլ դրանց կիրառությանն ու մեկնաբանությանը Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի համատեքստում:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հիմնավոր կասկածի, քրեական հետապնդումը բացառող հանգամանքների՝ օրենսգրքի կարգավորումների և Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի փոխհարաբերակցության, դրանց համատեղ դիտարկման փոխապայմանավորվածության կամ բացառման հարցերը պետք է առնվազն քննարկման արժանանան անձեռնմխելիությանը վերաբերող կարգավորումների կամ դրա սահմանադրաիրավական նշանակության բացահայտման միջոցով:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:

Քրեական վարույթի շրջանակներում կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառության համար «հիմնավոր կասկածի» առկայությունն ունի առաջնային

նշանակություն, քանի որ առանց հիմնավոր կասկածի առկայության անձին ազատությունից զրկելը կհամարվի ոչ օրինական:

Կարևորելով «հիմնավոր կասկածի» որպես կամայական ձերբակալումը կամ կալանավորումը բացառող հանգամանքի առկայությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում անդրադարձել է այս հարցին՝ մշակելով կասկածի հիմնավորման որոշակի չափանիշ, ինչը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է կատարած լինել հանցագործություն⁸⁵:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հիմնավոր կասկածի վերաբերյալ վերջին տարիների վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնավոր կասկածի բովանդակության բացահայտման շրջանակներում ներառվել է ոչ միայն ներկայացված փաստերը և տեղեկությունները, այլ նաև արարքի իրավաբանական գնահատականը⁸⁶:

Այդպիսով, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման իմաստով «հիմնավոր կասկածի» չափանիշը ենթադրում է, հանցանքի կատարման անձի առնչությունը վկայող փաստական տվյալների գնահատումից զատ, նաև պատասխանատվությունը բացառող հանգամանքների գնահատում: Մյուս կողմից՝ կալանքի կիրառության հարցի քննարկումը չի կարող ենթադրել հարցերի այն շրջանակի քննարկում կամ իրավական գնահատականներ, որոնք վերաբերում են անձի մեղավորության հարցին:

Եվրոպական դատարանի զարգացրած իրավական այս դիրքորոշումների համատեքստում «հիմնավոր կասկածի» և «Հանրապետության նախագահի անձեռնմխելիության» իրավական կատեգորիաների դիտարկումը ենթադրում է, որ վերջինս կալանքի կիրառության հարցը քննող դատարանի կողմից դիտարկման առարկա պետք է դառնա այնքանով, որքանով այն՝ որպես

⁸⁵ Տե՛ս Կ. Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.F. v. Germany) գործով 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 144/1996/765/962, կետ 57:

⁸⁶ Տե՛ս Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի (Khachatryan and the others v. Armenia) գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06, Կանոթովն ընդդեմ Բուլղարիայի (Kandzhov v. Bulgaria) գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 68294/01, կետ 57, Վլոչն ընդդեմ Լեհաստանի (Wloch v Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 27785/95, կետ 108:

քրեական պատասխանատվությունը բացառող ինստիտուտ, կարող է առաջ բերել «հիմնավոր կասկածի» բացակայության մասին դատարանի հետևություն: Ասվածն իր հերթին մեկ այլ եզրահանգման է հանգեցնում, որ այդպիսով Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը՝ որպես «հիմնավոր կասկածի» շրջանակներում գնահատման ենթակա իրավական կատեգորիա, բովանդակային ծավալով չի կարող նույնացվել քրեական պատասխանատվության հարցը լուծելու տեսանկյունից դրա իրավական նշանակությանը:

Գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում, սակայն, «հիմնավոր կասկածը»՝ որպես կալանավորման իրավաչափության պայման դիտարկելիս Հանրապետության նախագահի անձեռնմխելիության հարցի քննարկման շրջանակների որոշակիացումն իրավական այլ հարցադրումներ է առաջացնում: Այսպես, սույն դիրքորոշման շրջանակում Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական ինստիտուտի երաշխիքային բովանդակությանն ու շրջանակներին անդրադարձ չկատարելով հանդերձ՝ հարկ է նկատել, որ քրեադատավարական օրենքը չի նախատեսում անձեռնմխելիության սահմանադրական ինստիտուտի գնահատման մեխանիզմ քրեական գործով վարույթի կոնկրետ փուլում: Արդյունքում, օրենսդրական մակարդակում որոշակի չէ, թե այդ ինստիտուտն ինչպես է հարաբերակցվում քրեադատավարական ինստիտուտների՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների, հիմնավոր կասկածի, անձի մեղավորության հարցերի քննարկման հետ:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Դիմող կողմի պահանջը

Դիմող, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի, 314.3-րդ հոդվածի և իրավակիրառ

պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ, 75-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիրքորոշումը

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը ամրագրում է հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը: Սույն դիրքորոշման շրջանակներում ուսումնասիրության է ենթակա նշյալ հոդվածի երրորդ նախադասությունը, համաձայն որի՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Այսպես, Սահմանադրական դատարանը 2011 թվականի ՍԴՈ-1000 որոշման շրջանակներում անդրադարձել է արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող հարաբերությունները կարգավորող սահմանադրական նորմերի, դրանցում ամրագրված մոտեցումների և միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված դրույթների փոխհարաբերության հարցին: Դատարանը, մասնավորապես նշել է. «Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող հարաբերությունները կարգավորող սահմանադրական նորմերը և դրանցում ամրագրված մոտեցումները համահունչ են միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված դրույթներին: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11–րդ հոդվածի 2–րդ մասը սահմանում է, որ՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ քրեական հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»: Միաժամանակ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 15), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդված 7, մաս 1) և միջազգային իրավական այլ փաստաթղթերում ևս անդրադարձ է արվել խնդրո առարկա հարցերի կարգավորմանը՝ նախատեսելով, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող քրեական օրենքն ունի հետադարձ ուժ:»:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ըստ այդմ, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան: Այսպես, Եվրոպական դատարանը Մաքթուֆն ու Դամյանովիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի գործով հայտնել է դիրքորոշում առ այն, որ միայն անձի համար բարենպաստ օրենքը կարող է ունենալ հետադարձ ուժ: Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել այն հանցագործության համար, որն ազգային կամ միջազգային օրենսդրական կարգավորումներով դրա կատարման պահին չի համարվել հանցագործություն, ոչ էլ կարող է ավելի ծանր պատիժ կիրառվել, քան այն, ինչը նախատեսված է եղել հանցագործության կատարման պահին: **Շարունակելով՝ դատարանը նշել է նաև, որ ընդհակառակը, եթե գործող կարգավորումները կատարված հանցագործության համար նախատեսում են ավելի թեթև պատիժ, քան այն կարգավորումները, որոնց գործողության օրոք կատարվել է հանցագործությունը, ապա պետք է նշանակվի առավել մեղմ պատիժ:** Ավելին, դատարանը հավելել է նաև, որ այս սկզբունքները բոլոր պետությունների համար պարտադիր, միջազգային իրավունքի կանոնների մի մասն են, որոնցից միջազգային կամ ազգային օրենսդրությամբ սահմանված որևէ կարգավորում չի կարող շեղվել (*jus cogens*)⁸⁷:

Քրեական օրենքի հետադարձ ուժի ինստիտուտը կարգավորվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքով: Օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, **այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:**

⁸⁷ Տես Մաքթուֆն ու Դամյանովիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի գործով (MAKTOUF AND DAMJANOVIĆ v. BOSNIA AND HERZEGOVINA), 2013 թվականի հուլիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ՝ 2312/08 34179/08

Այսպես, ի թիվս երկու այլ հանգամանքի, նշված կարգավորմամբ նախատեսվում է օրենքի հետադարձության կիրառում, եթե այն արարքի հանցավորությունը վերացնող է: Արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հետ գործ ունենք այն պարագայում, երբ այդ օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որը նախկին օրենքով հանցագործություն էր (լրիվ ապաքրեականացում) և երբ հանցանքը չի դադարում հանցագործություն լինելուց և չի վերացվում, սակայն, հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում):

Խոսելով մասնակի ապաքրեականացման մասին՝ հարկ է նշել, որ այն կարող է իրականացվել նաև հանցագործության առարկայի և օբյեկտի, սուբյեկտիվ կողմի, սուբյեկտի, տուժողի հատկանիշների փոփոխությամբ⁸⁸:

Միևնույն ժամանակ արարքի հանցավորության վերացնող օրենքի հետադարձության մասին խոսելիս, հարկ է քննարկել նաև այն հարցը, թե ինչպես պետք է գործնականում կիրառվի տվյալ օրենքը: Այսպես, գտնվելով նախնական քննության փուլում և դատավճիռ կայացված չլինելու պարագայում գործը կարճվում է, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ» վերտառությամբ 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, համաձայն որի՝ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա:

Դատավճռի առկայության պարագայում գործը ենթակա է վերանայման, միևնույն ժամանակ անձին ազատելով պատիժը կրելուց, իսկ պատիժը կրած և դատվածություն ունեցած անձինք համարվում են դատվածություն չունեցող: Վերը նշվածը հիմնված է Սահմանադրական դատարանի 2017 թվականի փետրվարի 14-ի ՍԴՈ- 1348 որոշմամբ արտահայտված դիրքորոշման վրա, ըստ որի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պատիժ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի

⁸⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս Հ247 (Երրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)/Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: Երևանի համալս. Հրատ., 2007, էջ 54:

պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք:

Վերոգրյալ երկուսից զատ, արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հետադարձության վերաբերյալ որևէ այլ դեպք քննարկման ենթակա չէ: Վերադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, հարկ է նշել, որ վերջինով սահմանվում է նաև, որ արարքի մեջ հանցակազմ չլինելու պարագայում քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել:

Նշվածն առավել համապարփակ ներկայացնելու համար հարկ է նշել, որ հանցակազմը հանրորեն վտանգավոր արարքի քրեական օրենքով սահմանված օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների համակցությունն է: Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Վերոգրյալ կարգավորման վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ եթե չկա հանցակազմ, ապա չկա հանցանք, իսկ եթե չկա հանցանք, ապա չի կարող լինել քրեական պատասխանատվություն (*nulla poena sine lege*): Հանցակազմ չլինելու մասին կարելի խոսել այն պարագայում, երբ դրա՝ միասնության մեջ հանդես եկող տարրերից (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) թեկուզ մեկը բացակայում է:

Քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «**Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով** նախատեսված հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի

գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Մինևույն ժամանակ, օրենսգրքի 310.1-րդ հոդվածի համաձայն ապօրինի հարստանալը՝ **«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝** հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

Տվյալ դեպքում սույն հանցակազմերի սուբյեկտին պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին: Այսպես, նշյալ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ այդ օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, հանրային ծառայության անցնելու պահանջները, հանրային պաշտոնների դասակարգումը, հանրային ծառայողի հիմնական իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, պաշտոնների առանձնահատկությունները, բարեվարքության համակարգը, կարգավորվում են գույքի, **եկամուտների և շահերի հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:**

Անհրաժեշտ է նշել, որ 2018 թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքը: Նշյալ օրենքի «Օրենքի ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 54-րդ հոդվածը բացահայտում է դրա տարբեր դրույթների ուժի մեջ մտնելը: Միաժամանակ 2012 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի որոշ դրույթներ շարունակում են գործել և դրանց ուժը կորցնելը պայմանավորված է որոշակի հանգամանքների վրա հասնելու հետ:

Մասնավորապես, «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՕ-206-Ն օրենքն ուժի մեջ մտնելու

պահից ուժը կորցրած է ճանաչվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-172-Ն օրենքը, բացառությամբ 23-24-րդ, 28-րդ, 30-37-րդ հոդվածների, 38-րդ հոդվածի 3-րդ մասի, 4-րդ մասի առաջին նախադասության, 38.1-40-րդ, 41-րդ հոդվածի 1-ին մասի, 41.1-44-րդ հոդվածների, 52-րդ հոդվածի 5-րդ մասի: Ըստ նույն օրենքի, դրա 31-33-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին մասն ուժի մեջ են մտնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահից: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-172-Ն օրենքի 23-24-րդ, 30-31-րդ հոդվածների, 32-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

Ստացվում է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, որը սահմանել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակը, ուժը կորցրած է ճանաչվել: Ըստ այդմ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակը բացահայտվել է «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքով: Այսպես, նշյալ օրենքի համապարփակ ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած օրենքի 60-րդ հոդվածը սահմանում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի «Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-172-Ն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում նշված «բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի փոխարեն (սուբյեկտային կազմի առումով) ներկայացվող պաշտոնների շրջանակը: Այսինքն, վերոնշյալով սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակը, ինչը նախկինում կարգավորվում էր «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով:

Ստացվում է, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը փոփոխելով փոխվում է նաև տվյալ հանցակազմի սուբյեկտը, ինչի արդյունքում որոշ պաշտոնատար անձանց համար հանգեցնում է արարքի ապաքրեականացման: Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ նշվածի արդյունքում իրավունքի ուժով պետք է բացառվի գործի հարուցումը կամ քրեական հետապնդումը: Հակառակ պարագայում չի կիրառվի ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային չափանիշներով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ իրավունքի ուժով կիրառվող արարքի պատժելիությունը

վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն հետադարձ ուժի սկզբունքը՝
դրանով իսկ հակասելով ՀՀ Սահմանադրության 72-րդ և 81-րդ հոդվածներին: